



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4867

„ԱՆԻԾՈՒԱԾ ՎԱՅՐՈՒ“

(ՆՈՎԵԼԼԱ ԿՈՎԿԱՄՍԻ ԿԵԱՆՔԻՑ)

Թարգմ. գերմ. Ա. Տէ՛ր-Պօղոսեան

83

Ֆ-96

Ա.-Պետերբուհով

ՊՈՏՀԿԻՆԵԱՆ ՏՎԱՐԱՆ

1903.

83 up.

~~03 AUG 2005~~

ପ୍ରକାଶ ଫର୍ମ ନିବେଦିନ

2 NOV 2009

		4885 4885 41
83		<u>ФИЛОСОФ</u>
9-96		<u>"ИЗДАНИЕ</u>
		<u>"ИЗДАНИЕ"</u>
	"11542"	
		<u>РГБ</u>

„ԱՆԻԾՈՒԱԾ ՎԱՅՐԸ“

(ՆՈՎԵԼԱ ԿՈՎԿԱՍԻ ԿԵԱՆՔԻՑ)

249

Թարգմ. գերմաներէնից
Ա. ՏԵՐ-ՊՈՂՈՍԵԱՆ

Ա. ՊԵՏԵՐԲՈՒՀԳ

ԱՆԻՑՈՒԱԾ ՎԱՅՐԵ

Մի երկրում, որը հարիւրթերթեալ վարդի հայրենիքն է, ուր խիտ անտառների մէջ աղնիւ-վասիանն է հրապուրում մարդուս, որտեղ անլիշատակ ժամանակներից ի վեր աղնիւ մարդկալին կերպարանքներ օրհնած հողի վրայ ման են գալիս, դանւում է լերկ, դեղնած, արևակեղ, հողմաշունչ մի անապատ:

Անապատի շուրջը երեք կողմից ծառում է նոնենիների ու թղենիների, թթենիների ու արմաւենիների աշխարհը, չորրորդ կողմից անհիւրասէր ծովը փոթորկում է ամայի եղերքը:

Եւ այդ անապատի մէջտեղ, որը չէ կարող սնուցանել ոչ մի էակ, ոչ բոյս, ոչ կենդանի, և ոչ էլ մարդ, որովհետեւ նրա հողը թունաւորուած է, օղը ժանտահոտ, չուրը մահացու—այս մարդատեաց ամայութեան մէջ դանւում է մի անիմուած վայր և այդ վայրում կայ մի քաղաք:

Իրօք նա անիմուած է, այդ վայրը, ուր դանւում է քաղաքը:

Այնտեղ բնակող ու իշխողներից շատերը հաւատացած են, թէ դա մի զերամեծար տեղ է, որովհետեւ նրանց աչքերը կուրացել են անվերջ թուեր կարգալուց: Նրանք այլևս չեն տեսնում, որ այդ տեղը անիմուած է:

Միենոյն արեւը, որ շրջակայ պտղատու աշխարհում այնպէս լի ու բեղուն ծլեցնում է բոլսերի սաղմերը և իր ամբողջ բարերար զօրութիւնը զեղում է այդ

Дозволено цензурою. С.-Петербургъ, 8 Марта 1903 года.



4885
91

„Пушкинская Скоропечатня“, Лешуковъ 4.

արդաւանդ երկրի վրայ, — այս տեղ սակայն այդ մի և
նոյն արել միլիոնաւոր տարիներից ի վեր սպանիչ էներ-
դիալով ալրել է ամեն ինչ և վաղանցուկ ստեղծագոր-
ծութիւնների միջոցով՝ որոնց նա շուտով դարձեալ ոչըն-
չացնում էր, այդ էներդիան աւանդել է զետնին, որպէս-
դի սա իր մէջ պահէ արեի արտադրող ու ոչնչացնո՞յ
զօրութիւնը:

Սհարկու կեանք-պարզեողը կամեցաւ իր խնամար-
կեալին՝ երկրին, սրա ծերութեան օրերի համար մի ժա-
ռանգութիւն թողնել, մի գանձ՝ գալիք խղնուկ ժամա-
նակների համար, տաքութիւն՝ ծմեռուայ համար, որին
ալես ոչ մի գարուն հետեւելու չէ:

Եւ արել արտադրում էր ու խանձում, արտադրում
էր ու ալրում, կերպաւորում էր ու ածխացնում, ար-
տադրում էր և սուլում այդ տեղը ու այդպիսով գոյաց-
րեց ապագայ ժամանակների համար ստորերկրեայ գանձր-
նրա անդադրում դրծող զօրութեան ազդեցութեամբ
չքացաւ ակնթարթը զարդարող ձաղիկը, և անցաւոր
քաղցր պտուղն ու սաւանող թռչունը: Այդ վայրում
ապագան ապահովելու համար ներկան պէտք է լիներ
խոպան, անհրապոյր և անմխիթար:

Սրգեօք այդ խղնուկ ժամանակները երեացել են
արդէն: Հասել են արդէն երկրի ծերութեան օրերը:

Սրեի այստեղ ամբարած էներդիան՝ այդ ակնթարթի
պատերի ամբողչ խոպանութեան, ամբողչ անախորժու-
թեան և ամբողչ անմխիթարութեան միջից դուրս ցայ-
տել սկսեց: Խորութեան մէջ գանձը ուաքի ելաւ և սկսեց
բորբոքուիլ: Խորհրդաւոր ու արտառոց կերպով ազդեց
ուրիշ էներդիաների վրայ և անդիմադրելի կերպով քաշ
տուեց նրանց դէպի այս խոպան, անմխիթար ու անհրա-
պոյր վայրը:

Առասպելական վիշապի, հեքեաթների մի զարհու-
թելի էակի նման, որ հաղարաւոր թևերով ծեռն է մխում
իր շուրջը, այստեղ թաղուած ոչժր՝ կարծես ծանծրա-
ցած գագաղի մէջ դրուած մնալուց, ծեռք մեկնեց դէպի
տննշան գատաների՝ մարդկանց, էներդիաները, իր շուրջը
հաւաքեց, ծծեց-քամեց նրանց իր մէջ, ստրուկներ գարծ-
քեց ու այդ ստրուկներին նոր ստրուկներ ժողովել
առուեց և էլի նորերը ու գարձեալ նորերը, մինչդեռ ինքը
արեի ամբարած էներդիան վերածեց մի ուրիշին — փողի
էներդիային:

Այսպէս վրայ հասաւ անէծքը:

Եռացող գաճաճային էներդիաները, որոնք հաւա-
քուեցան այնտեղ, խոնուեցին իրար վրայ ինչպէս փա-
րուանները (էֆեմերները) խմբւում են փողոյի լապտեր-
ների շուրջը՝ այսպէս իրար անցան. մէկը խեղիկ, ճնշեց
ուրիշ հարիւրաւորների: Ի վերջոյ մի քանիար յաղթող
հանդիսացան. նրանք շինեցին քաղաքը իր եռուն, ամե-
նաբարձր աստիճանին հասած կեանքի տենդով, այն քա-
զաքը, որի վրայ ծանրանում է զրամի անէծքը:

Քաղաքն ու իր արուարձանները մի անկուշտ երա-
խի են նմանում, որ մշտապէս բաց է, յաւիտենապէս
ծարաւ է: Եւ միայն թարմ արիւնը կարող է յագեցնել
նրա ծարաւը: Ինչո՞ւ էր վարանում ուրեմն, գո՞ւք մատ-
զահաս զոհեր:

*

Դարուն է. շուտով վարդերը կը բացուին. ապա-
ռամքների մէջ մեխակներն արդէն ծաղկել են:

Սակայն Տիգրանը հեռանում է:

Ընկուղենու հոտաւէտ սաղարթները խտացել և
զուզել են, նրա բունին փարել է նոխ, հիւթալի, թարմ
տեղեւներով որթենին:

Սակայն Տիգրանը հեռանում է:

Չմեռնալին զոմերը գրեթէ դատարկուել են. փոքրիկ գառնուկներն ու մկնացող ուելերը վիստում են զիւղամիջում:

Սակայն Տիգրանը գնում է:

Թթենու ստուերի տակից հնչում է հովուի սրինդը, նրան արծագանք է տալիս ելագ ժողովող աղջիկների ծիծաղը. աղբիւրի մօտի բարձր աճած խոտերը պարողների ուքի տակ արորուած են:

Բայց Տիգրանը գնում է:

Նրա մալը՝ Անդինը, լալիս է. լալիս է Նարզիսը՝ նրա սիրամը. Տիգրանն էլ է լաց լինում:

Սակայն Տիգրանը գնում է:

Անդինը բուրդ է մանել և մանամը խոտերի հիւթով հանդուած ու պսպղուն, չը հունացող զոյներով ներկել ու դործել է ճանապարհորդական պայուսակը—խուրցինը, որն իր ուսերի վրայ պիտի կը Տիգրանը՝ Անդինը արցունքով է հիւսել թելերը կարկանի մէջ: Հիւսել ու միւնոյն ժամանակ լաց է եղել:

Որովհետեւ Տիգրանը նրա կրտսեր ու ամենասիրելի տղան է:

Նարզիսը իւր մօրից ժամուկ լաւ բուրդ էր գողացել: Նորա մալը զիւղումն եղած ամենազեղեցիկ նմուշն օրինակել էր—մի պարսկական արմաւենու նմուշ, բաղմերանդ՝ կարծիր զիսաւոր դոյնով, տափով: Նարզիսը դուլպաներ զործեց ու միւնոյն ժամանակ լաց եղաւ.

Որովհետեւ Տիգրանը նորա սիրամն է:

Կա՞ մէկը, որ աւելի դուրեկան աչքեր ունի՝ քան Տիգրանը:

Ո՞վ ունի Տիգրանի նման խիստ սե զանգուրները

Ո՞վ աւելի նուրբ հասակ ունի՝ քան Տիգրանը:

Ո՞վ աւելի հպարտ է պահում իր վիզը՝ քան Տիգրանը:

Երկար հովուական սրինդը ո՞վ է այնպէս անուշ նուազում երեկոները, երբ ամառնալին տաք ցերեկից յետոյ Խալաբի բլրի վրայ զով քամին է խաղում: Տիգրան, Տիգրան: Ի՞նչպէս կարելի է Տիգրանին թողած ուրիշի վրայ ուշաղրութիւն դարձնել:

Բայց գնում է Տիգրանը և նարզիսը լալիս: Իսկ ուր է գնում Տիգրանը:

Մի՞թէ ծաղիկների առատութիւն չէ չորս կողմը և քաղցր չո՞ւր և քաղցր պատղնե՞ր. և հուժկու գոմէշները լծի տակ չե՞ն. անտառի մէջ չէ հրապուրում հնդկահաւը:

Ո՞ւր է գնում ուրեմն Տիգրանը:

Արդեօք ուզում է մի երկի՞ր գտնել, որն աւելի գեղեցիկ լինի, քան այս չափաղանց պաղառատ ու օրհնած երկիրը լեռների լանջի վրայ:

Ախ, չէ. նա աւելի գեղեցիկը փնտոելու չէ գնում:

Ուզում է աւելի սիրելի բարեկամնե՞ր գտնել, աւելի թանկաղին մարդիկ, աւելի հաւատարիմ հոգիներ:

Ախ, չէ. Տիգրանի համար աւելի սիրելին, աւելի թանկաղինը, աւելի հաւատարիմը չը կայ, քան թէ իր մալըն ու իր սիրամը:

Ուզում է նա փանգաւոր որսորդութեան, թէ մի ուրիշ յանդուզն ձեռնարկութիւն անելու երթար:

Ախ, չէ. կալմքարով հրացանը տանն է թողնում. հեան է առնում միայն իր ճանապարհորդական կօպալ մահակը, խուրչինը՝ սպիտակեղէնով ու հազուստով, իբր ճանապարհի կերակուր՝ մօրը պատրաստած քաղցրաւենիներով և իբրև զովացուցիչ ուտելիք՝ մածուն լցրած ամանով բեռնաւորած:

Ուր է գնում:

Նա գնում է մի այնպիսի տեղ, ուր ոչ մի ծառ չէ կանաչում, ոչ մի խոտ չէ բուսնում, ուր ոչ մի նապաստակ չէ ցատկուում, ոչ մի քաղցրահամ ու վճիտ աղբիւր չէ հոսում, ուր ոչ մի թռչուն չէ սուլում—որտեղ միայն ծովագին քամին է ոռնում, ուր երկրի միշից արտառոց կերպով բոցավառուող հրդեհ է բռնկում, ուր թռչուում է աչք կուրացնող, կոկորդը խեղզող փոշին, որտեղ գետինը երկաթէ անցքերի միշից հեղծուցիչ գոլորշի է արտաշնչում, ուր երկրի երակների մէջ պարունակուում է սև գարշահոտ ծիւթ, որ կարկաչող հորերից գուրս է ժայթքում ու ահազին բարձրութեամբ ցայտում:

Այնտեղ, ուր տաք աւազը կենսազուրկ է, կեանքը մահացնող է, ուր չերծ օղը վատ է շնչելու համար, պըղտոր չուրը դառն է խմելու համար—այն տեղն է գնում Տիգրանը:

Այնտեղ, ուր ցերեկը ոչ մի զուարճութիւն և զիշերը ոչ մի հանգստութիւն չի ճանաչում. որտեղ առաւտափից մինչեւ երեկոյ և երեկոյից մինչեւ առաւտաչում, շչում, գարբնում, գղրդեցնում, խրխնչում, մռնչում են—այն տեղն է գնում Տիգրանը:

Այնտեղ, ուր երկիրը վստահելի, հեղահամբոյր մայր չէ, այլ խաբուպատիր, անկայուն ու տարօրինակ մի բան, որի մէջ անզգոյց ոտքը կը խորասուզուի առանց վերագարձի ու առանց փրկութեան—այն տեղն է գնում Տիգրանը:

Ուր ծիւթոտ աւազի վրայ արեր՝ ոչ մի շուաքով չը մեղմացած, իր ամբողջ շերմութիւնն է ցած թափում, ուր արեն ու լուսինը խաւարում են սաւառնող աւազափոշուց—այն տեղն է գնում Տիգրանը:

Ինչու է գնում: Ուզում է զրախտից գժոխքն ընկնել: Նրա մալրն՝ Անգինը, լալիս է լալիս է Նարդիսը՝ նրա սիրածը. լալիս են ընկերներն ու բարեկամները: Ինչու է գնում ուրեմն:

Չէ, դէպի անծանօթը նա ոչ մի փափագ չէ զգում. չէ, նա զեղեցիկ գոյներով չէ պատկերացնում իրեն այն երկիրը, ուր սև հսկան է իշխում, թէպէտ նրա արհաւիրքների մասին դեռևս դաղափար չունի: Ոչ, նա կը ցանկանար մնալ այստեղ, լունալանջի վրայի իր հայրենի գիւղը, ուր շուտով թութը կը հասուննայ և ուր նա ազատ է իր ցանկացած տեղը գնալու:

Բայց — — — մի տեղեկութիւն է ստացուել, մի հազուագէպ տեղեկութիւն:

Տիգրանի ընկեր Սիմոնը քսան բուրլի է ուզարգել տուն՝ իր մօրը. Սիմոնի գնալը երկու ամիս է միայն:

Բայց առաջին համբաւաբերը Սիմոնը չէր. սա էլ տեղեկացել էր հարեւան գիւղացի Համբարձումից: Համբարձումը առաջինն էր, որն իր լեռներից գնաց այն վայրը, ուր զեանի տակից գուրս է ժայթքում գարշահոտ ոսկին:

Ինն ամիս էր, ինչ Համբարձումը գնացել էր և արդէն չօրս անզամ քսանական բուրլի էր ուզարկել տուն:

Եւ այժմ նա եկել է, որպէսզի Տիգրանին էլ իր հետը տանէ:

Ինչու չը գնալ, Տիգրան:

Փող, փող, քսան բուրլի. Ազայիշէնի համար մի կարողութիւն: Եթէ մէկը մի գիւղացու մօտ ամբողչ տարին ծառալէ, կը ստանայ 50—60 բուրլի. իսկ Տիգրանը երկու ամսից արդէն քսան բուրլի կուղարկէ մօրը:

Սիմոնի մայրը ոչխար, խող է գնում. դեռ տարին չը լրացած, նա յանկարծ հարուստ կին կը դառնայ:

Ինչու միայն Սիմոնի մալրը, ինչու այդպէս չը լինի
Տիգրանի մալրն էլ, որ հինգ որդի ունի, հինգ բարձրա-
հասակ, մաղ-միրուքով, ուժեղ տղամարդիկ, ամեն աե-
սակ աշխատանքի ընդունակ: Գնա՛, Տիգրան:

Անդինը լալիս է, բայց իր որդուն պատրաստում է
հանապարհի համար:

Տիգրանը լալիս է, բայց իր միտքը նախապատրաս-
տում է հրաժեշտի: Նա փող կաշխատէ ու կուղարկէ
տուն և փողը կը հաւաքուի ու յետոյ նա կը դառնայ
և նարդիսի հետ նշանազրութեան հանդէսը կը կատարէ:

Լաց է լինում նարդիսը, բայց ո՞վ է նորա կար-
ծիքը հարցնում: Եւ թերեւս... Գեղեցիկ չէ՝ միթէ ար-
ծաթէ գօտին, որ փողով կարելի է գնել: Տիգրանը դուցէ
մի այդպիսի գօտիք բերէր հետը, նշանազրութեան համար...

Ժայռերի մէջ ծաղկել է մեխակը, ծորում պակել է
վարդը — մնա՛ս բարով, Ազայշէն, իմ հալրէնի զիւղ-
մնա՛ս բարով, մալրիկ, հարազատս. մնա՛ս բարով, նար-
դիս, թագուն սիրածս. մնա՛ք բարով, բնկերներ:

Կանուխ, շատ կանուխ, նախ քան ջեռուցիչ, թարմ,
գարնանալին սրեկի ծագելը հրաժեշտ տուեց Տիգրանը:
Մի օր պէտք է թափառէր նա լեռնիվար, լեռնիվեր,
ապա զարձեալ լեռնիվար, ընդարձակ զաշաերի միջով,
մի ամբողջ օր, մինչեւ հասնէր ալն սկ հսկալին, որը
կրակ ժայթքելով, երկաթէ ոտքերի բարձրածալն քայ-
լերով թաւալում է երկրների միջից: Տիգրանը տեսել
էր նրան շատ հեռուից միայն, բայց այն ժամանակ այդ
հսկան կծկուած էր եղել ինչպէս զորշագոյն օծը:

Հաղիւ բացուել էր արշալոյսը. ցուրտ էր ու ցո-
ղապատ: Տիգրանն ու Համբարձումը ճամբալ ընկան. բայց
ոչ միայնակ. եղբալրներն ու բնկերները դեռ նրանց
հետն են:

Տիգրանի աչքերը ծանրացել են արցունքից, որ
ամօթխածութեամբ թաղցնում է նա. մթութիւնը նրան
շատ հածելի էր: Ոչինչ չէ կարող խօսել. ամեն բան
առւել է արդէն: Նա պարզ պատկերացնում է իր մօր
արտասուալի աչքերը:

Բայց աշխուժով խօսակցում են զոյդ կոլրերը — նրա
քեռիները, որոնք նոյնպէս եկել են ճամբու ծղելու: Գի-
շեր թէ ցերեկ նրանց համար միւնոյնն է — միշտ միա-
կերպ մութն. սակայն նրանց միտքը զուարթէ. նրանց
կուրծքը հպարտ ուռչում է իրանց քրոջ որդու պատ-
ճառով, որ այժմ քաղտքն է զնալու և փող վաստա-
կելու: Իրանք էլ կ'երթալին, ասում են նրանք, եթէ
միայն կարողանալին: Բայց ստիպուած են այստեղ մնալ,
ուր նրանք ճանաչում են ամեն մի քարը, որտեղ աղ-
բիւրի մօտ չուր խմող ամբողջ նախիրի միշից իրանց
դոմէշները չոկում ու կոտոշներիցը բռնած քաշում են
իրանց ետևից, ուր նրանք կարող են հերկ անել և ան-
տառից փայտ բառնալ այնպէս, ինչպէս երկու աչքով
տեսնողները:

Տիգրանը լսում է նրանց զրոյցը: Անձանօթի մա-
սին մտածելով՝ սարսուում է սիրար, բայց և քիչ-քիչ
շարժուում է հետաքրքրութիւնը. նա տեսնելու է շատ
բան, ինչ որ ուրիշները չեն տեսնում — բաղաքի սքան-
չելիքներն է տեսնելու: Եւ փող է աշխատելու:

Գառան մորթուց նոր սկ զիխարկը ծածկում է նրա
ճակատը: Մալրը նրան զարդարել էր վայելուչ կերպով.
սկ արխալուխը նոր, արծաթէ ժապաւէն ունէր, որ ծրգ-
ուում էր փողպատի շուրջն ու առջեր: Կանաչ, կարմիր
և կապոյտ գոյներով էին ներկուած սկ վարտիկի ծալ-
քերն ամփոփող նոր սոնապանները՝ զօլաղները: Նա
նայում էր իր սաների վրայ և ուրախ ժպտում: Նար-

գիսի մայրը երեկ իրիկնապահին բերեց այս նոր, զարդարուն, դէպի վերը ծուած ծալրերով մուժակները, այս նախշուն զուլպաները, որոնց մէջ սեղմուած էին իր ոտները: Սիրականը ցանկացել է իրեն բարի ճանապարհ մաղթել, ինքն այդ զգում է:

Ճանապարհից գուրս, սրածալը ապառաժների և թաւուտների միշից դէպի ցած են զնում: Չորի մէջ, որտեղ ձմեռնալին գոմերն են, մութն է դեռ:

Մինչև այսաեղ ուղեկցում են նրանց բարեկամները: Արանք տանում էին ճանապարհորդների կապոյները. ուղում էին նրանց՝ չամբարծումին ու աւելի ևս մատղահաս Տիգրանին դեռ որեւէ հանոյթ պատճառել. բայց Տիգրանը հանոյթի մասին չէր մտածում, այլ միայն հրաժեշտի մասին: Նա իր բալլերն ու ոստումները անում էր մերենայօրէն. մի դատապարտուածի էր նմանում: Լուսաւորուած, երկար դիրքով կառուցուած գոմերը մթնաշղին տալով երևացին ծառերի ետեից և լսուեց ծածկուած աղբիւրի կարկաչը, որտեղ Տիգրանը վերջին անգամ տեսել էր նարդիսին: Նարդիսի ձեռքին սև խաղողի մի լիքը ողկոյզ կար, բայց նորա աչքերը խաղողի պառլներից աւելի սև էին: Եւ Տիգրանը ամբողջ օր քթի տակ մրմնչել էր—

Քաղցր խաղող կացահարում է աղաւնին,

Խաղող տեսնողն անարգում չի սեերին:

Որսորդը շատ է վախենում աղաւնուց,

Նա սպիտակ, իսկ իմ երեսը սեփ-սե է:

Տիգրանը արթնցաւ իր երազանքից: Վերջին հրաժեշտի ժամն է:

Այժմ առաջ, չամբարծումի հետ միայնակ: Տիգրանը աեղաւորեց իր խուրչինը կրծքի ու քամակի վրայ, որ մինչև այդ իր բարեկամն էր վերցրել. աւելի ամուր սեղ-

մեց զաւազանը և շատապ քայլերով չամբարծումի առաջը տուաւ: Նա մօտեցաւ ուռենուց կապած խոշոր-խոշոր կոտոշներով մի գոմեշի և մտամոլոր կերպով նրա քամակը շոյեց. Տիգրանը նրան ճանաչում էր, ինքն էր նրան մեծացրել և երբ մալրը նրան ծախեց՝ շատ վշտացաւ: Կարծես անասունն էլ Տիգրանին ճանաչեց. շոյելու ժամանակ խղղուկ մայնով մոմում էր:

Եւ ահա թախիմը պատեց Տիգրանին: Կաղնիների ետեռում ձգուեց նա զետնի վրայ և լաց եղաւ: Իր տասնիննամեայ սրտում մի աննկարազրելի զարմանք, մի խուլ յուսահատութիւն էր ծագել իր գնալու առթով: Նրանք վերադարձան Աղայիշէն, ամենքը, իսկ ինքը—ախ, քանի օր ու քանի զիշեր պէտք է անցնի, մինչև որ ինքը վերադառնալ կարողանալ: Շփոթուած էր շուրջը նայեց. այնտեղ, ձորում, հիւղերի մէջ մթութիւնն էր տիրում դեռ և թշնամաբար իրեն նայում: Ունում էր շնագալը. ախուների մօտից պատասխանում էր մի շուն:

Տիգրանն իր ուղեկցի կոչը լսելով՝ իսկոյն ոտքի ելաւ և լուռ ու մունջ շարժուեցին նրանք հովիտից դէպի առաջաւոր բլուրների շղթան, որ նրանք պէտք է անցնէին: Կարմրաշաղին տուող առաւտեան պահին շտապով բլուրը բարձրացան նրանք: Այնտեղից վերջին անգամը պիտի տեսնէին Աղայիշէնը:

Օդը լի էր անհամար թռչունների երգերով, երբ նրանք վերը հասան: Այդ վաղորդեան շառագունած ժամին հեռաւոր լեռները կանաչաւուն բլրակների ետեից երկում էին ինչպէս ուրուականներ: Սակայն Տիգրանի հայեացը սեեռուած էր հանդիպակաց բլրակի վրայ, ուր Աղայիշէնի վշէ ցանկապատները հազիւ նկատելի կերպով գալիս միանում էին վայրի մացառների հետ: Արդէն այդպէս փոքր ու հեռաւո՞ր էր դարձել ամեն ինչ:

Սպառուելու մօտ խոտի գէղերի ձողերը միայն դուրս
էին ցցուել ամեն տեղ և մատնացոյց էին անում Ազալի-
շէնի իսկական տեղը: Որն էր Նարդիսի ծնողական տան
մօտի խոտի գէղը: Տիգրանը լարեց իր տեսողութիւնը:
Նրանց դուռը շրջապատող հիւսուածոյ ցանկապատի մէջ
Տիգրանը յաճախ թազցրել էր Նարդիսի համար մի ա-
ռանձնապէս գեղեցիկ նուռը, մի բուռն լի ամենաքաղցը
դեղծ և այդ նուերները միշտ տեղ էին հասել ըստ պատ-
կանելոյն: Միայն այն փոքրիկ անուշահոտ շամամը, որ
նա անցեալ աշնան պահել էր այնտեղ իր սիրածի հա-
մար, Նարդիսի մեծ-մայրն էր դաել, որի համար Նար-
դիսն իւր եղբայրներից խիստ յանդիմանութեան էր ար-
ժանացել: Նա, այդ չարաննի Նարդիսը, այն ժամանակ
մի ամբողջ շարաթ խոժոռել էր իր վրայ:

Մի քիչ ծուխ բարձրացաւ. արդէօք այդ ծուխն իր
մօր բնակարանիցն է: Ոչ մի տուն չէր կարելի ճանաչել.
հարթ, հողածածկ կտուրներով, այրերի նման բլուրների
մէջ փորուած տները բոլորովին կանաչի մէջ թաղուած
էին: Այն ծուխը թերես իր մօր բնակարանիցն էր. ինքը՝
մայրը, այսօր ոչինչ չէր ուտելու անշուշտ. ոչ այսօր,
ոչ վաղը և ոչ միւս օրը. այդ գիտէր Տիգրանը. մայրը
երեքօրեալ ծոմապահութեամբ Աստուածանից հայցելու
էր իւր որդու համար բաղզաւոր ճանապարհորդութիւն:
Այնտեղ մի ինչ որ բան չէր շարժւում արդեօք. մայրիկը
չէր նա, որ նշան էր անում դէպի ինքը, էլի բարեներ
ու բարեմաղթութիւններ ուղարկում եաւից: Ճանաչից
նա իրեն: Տիգրանն ուզեց փոխադարձ բարեի համար վեր
բարձրացնել իր ձեռքը, բայց սա թուլացած քաշ ըն-
կաւ էլի: Վերչիվերչոյ նշան արաց նա, նոյնպէս և համ-
բարձումը և, ոչ մի տարակոյս—բարեները ոյն կողմից
փոխանակուեցան:

Դժուարութսամբ շարժուեց Տիգրանը և շուռ տուեց
վլուխը՝ ոտքը բլբաղապաթից այն կողմը գնելով: Նրա
ետեւ մնաց բընծի արտը, որտեղ նա վար է արել, նրա
ետեւ՝ ուրախ կալատեղը, ուր նա իր ընկերների հետ
այնքան յաճախ նստել է սահող կամի վրայ: Խոնարհած
վլիսով շրջան էր կատարում առջեից լժած եղը և կամ-
նոյը հեշտութեամբ, առանց ձեռները շարժելու, իր սե-
փական մարմնի ժանրութեամբ միայն, որ հնշում է կամը
փռուած հունծիքի վրայ, լիբը հասկերից դուրս է պո-
կում հասած հատիկները: Նրա ետեւ մնաց բլբաղը, ուր
նա սպանել է փասիան, հնդկահաւ. նրա ետեւ՝ խիտ ան-
տառը, ուր նա սատկացրել է գալլին, լուսանին ցած է
վլորել. նրա ետեւ մնացին: Ամենչինչնրա ետեւ:

Եւ նրա առջեւ կար աշխատանք ու փող վաստակել:
Բայց ի՞նչ աշխատանք:

Ուրիշ ի՞նչ աշխատանք կարող է ունենալ մարդս,
քան վարելն ու հնծելը, փայտ կարելն ու տուն շինելը,
անասուններին խնամելն ու հոր փորելը: Գորդ գործելը
և պտուղ ու ծաղիկ հասցնելով զբաղուելն էլ կանանց
աշխատանքն է արդէն:

Տիգրանը առաջ էր շարժւում մտաղբաղ: Ինչ որ
նա իմանում, ինչ որ նա հասկանաւմ էր, մնաց իր ետեւ:
Առջեւ կար այն, ինչ որ ինքը չէր իմանում, չէր հաս-
կանում: Հորեր են փորում այնտեղ, ուր որ ինքն է գնում,
ասում էր Համբարձումը: Արդեօք այնպիսի՞ հորեր, ինչ-
պիսիներ կան զիւղերում, երկու մարդահասակ խորու-
թեամբ...

Ամբողջ օրը թափառեցին նրանք դաշտավայրի մէջ.
մի սիրուն զբոսանք էր այդ: Ալժմ, գարնանը, Մուղանի
դաշտը թաղուած էր ծաղիկների անսահման շքեղու-
թեան մէջ: Եւ մեր ուղերները իրար պատմում էին,

թէ որքան յաճախս իսենց լեռներից դիտել են այս դաշտու երբ ուշ աշնան թխագոյն եղեգնուտները այրում և ընդարձակ տարածութիւններ բոյցավառւում են. և թէ ինչպէս աչքերով հետեւել են նրանք այս դուրեկան կանաչ գծերին, որոնց ուղղութեամբ այժմ ընթանում են և որոնք այդ ծաղկած խոտածովի վրայ ծգուած են զանալան ուղղութեամբ: Այս գծերը նշանակում են անհամար ջրանցքները—հին կովկասեան հողի մշակութեան մնացորդները: Դրանց թումբերի վրայ խոտն ու ծաղկիլ առատ էին և նրանց վերևից ուռենիների պայծառ սաղարթներն էին հովհարւում:

Իսկ աւելի մուգ դունով ովասիսները—թուրքերի զիւղերը, սրածալը փայտակ ցիցերով և նրանց մէջաւղը ձգած փշի նիւղերի ցանկապատով, բոլորովին լեռան վրայի հայ զիւղերին էին նմանում։ Սակայն ալսաեղ, դաշտավայրում, տները չէին կարող կիսով չափ զեանի մէջ թաղուել։ տափարակ կտուրները աղատօրէն վեր էին բարձրացած, թէպէտ զեանից ոչ շատ բարձր։ Տնակները թաղուած էին ամբողջապէս խաղողի թփերի և թթենու ալիքների մէջ, բայց թթենիները այնպէս ստուերախիտ հսկաներ չէին, ինչպէս այնտեղ՝ լեռան վրայ, այլ զգզնած, հազիւ մարդահասակ թթուկներ էին, որոնց տերեները միայն որկրամոլ շերամներին կերակուր էին դառնում։

Ուռենիների հովանու ներքոյ մի քանի տնդամ հանգիստ առին մեր ճամբորդները. կերան քաղցր հացը՝ գաթան, որ չամբարձումի և ծիզրանի մայրերը դրել էին նրանց հետ. սպիտակ պանիր ու մածուն էլ ունեին: Տիգրանը քիչ կերաւ. ծամելու միջոցին մտածում էր որ յաջորդ անդամուակ հացը այլ ևս իր մօր ծեռքից չէր ստանալու, ապա իր աշխատանքով պէտք է գննէր: Եթէ միայն

զիանար թէ ի՞նչ տեսակ աշխատանք պիտի լինէր. վախը փախցրեց նրա ախորժակը:

Երբ մութին լնկնել սկսեց, չամբարձումը, որ փոր-
ծառու էր, խուսափեց անցնել ուռենիներով ժամկուած
չքանցըների մօտով՝ որտեղից գոլորշի էր բարձրանում:
Այդ գեղեցիկ պաղաքեր դաշտավայրում դարանակալել է
մի նենդաւոր թշնամի, որին հայ լեռնականը չէ ճանա-
չում. դարան է դրել չերծ:

Մթութեան միջից լոյսեր շողշողացին. լսելի եղաւ
մի սարօրինակ աղմուկի, որ սաստկացաւ ու կարուեց և
դարձեալ սաստկացաւ։ Նրանք հասել էին երկաթուղու
կայսրանը։

Աշտարակի նմանող մի օդաւեա շինուածք բարձ-
րացել էր կայսրանի մօտ ամբողջ հանապարհին նրանք
այսպիսի աշտարակների մօտով էին անցել: Ամառուաչ
շողին, երբ ամբողջ դաշտը դեղնում ու արևակէզ է դառ-
նում և ջրանցքների ու հաճիճների տղմից մոծակների
ամպեր են բարձրանում, ով որ կարող է փախչում է այս
աշտարակների վրայ զիշերը հանգստանալու: Այս ամենք
պատմում է Համբարձումը և Տիգրանը խուլ զարմացմանը
լում է:

Զարմանքով ու անվստահութեամբ նայեց Տիգրանը
շարժուող լապտերների լուսաւորութեան մէջ ածե, կաթ-
սայանման վագոնների երկար, երկար շարքերին և տե-
սաւ թէ ինչպէս այդ իրարու կապուած շարքը թեթև
մզումից արծակում էր այն որոտապին շառաչը, որը
նրանք հեռումից լսել էին: Ապա լսուեց մի սուլոյ շա-
չիւն և Տիգրանը զգաց միայն, որ յանկարծ իր ուսերիցը
բռնեցին ու յետ քաշեցին: Հենց իր քթի տակից անցաւ
լուսավառ աչքերով ինչ որ սպառնալի-դօրաւոր, մթին,
ահոելի-աղմկող մի բան, անցու ու անքայց, նռնչայ,

զդրդաց և յետոյ իր սարսափահար աչքերի առշեւ բարձրացաւ մի պատ այն տեղ, ուր մի բոպէ առաջ զեռ արծակ դաշտ էր: Այդ բոցաշունչ հսկան էր. հերեաթների մէջն անգամ աւելի ահոելի բան չէր կարող լինել: Տիգրանը ետ-ետ փախաւ ու երկիւղածութեամբ խաչակընքոյ երեսը:

Սակայն համբարձումը ծիծաղելով առաջ քշեց նրան և յանկարծակի լոյս ընկած տարօրինակ կերպարանը ունեցող մարդկանց հետ խօսեց մի օտար, Տիգրանին անհասկանալի լեզուավի: Նա Տիգրանին վեր հրեց մի-երկու աստիճան բարձր՝ մի արկղի մէջ, այնուհետեւ նեղ, այնքան տաք, այնպէս լիքը օտար մարդկանցով: Տիգրանը ամաչկոտ ու վեհերուա կերպով կծկուեց մի տեղ ու մնաց, և կառախմբի օրորուող ընթացքը շուտով նրա քունը բերեց:

Նրանք գնացին ամբողջ գիշերը:

Երբ գնացքը կանգ էր առնում, բարձրածայն հրամայողական խօսքեր հնչում էին դուրսը, երբ դռների շառաչմամբ վրայ զարնուիլը, գնացքի կրկին շարժուելու ժամանակ ականց ծակող սուլոցը հնչում, աչքերի առշեկից արագ-արագ անց էին կենում ճրագները, այն ժամանակ արթնանում էր Տիգրանը, դողում և աղաչական ու հարցական հայեացքով համբարձումին էր նայում: Իսկ համբարձումը բոլորովին կծկուել, ծածկել էր իր կարծ ու խիտ միրուքով զլուխը, ինչպէս որ հաւը կուչուռ է անում: ոչ զրսի աղմուկն էր արթնացնում նրան, ոչ էլ վերստին շարժման մէջ մտած կառախմբի ընդհարումները:

Օր-ցերեկ էր, որ նրանք հասան Բաքու:

Համբարձումն արդէն մի ժամ առաջ զարթնել էր. բայց նա տիսուր էր, յօրանջում և ծգծուում էր այդ մարդկանցով լի վագոնի մէջ: Տիգրանը չէր կարողացել

երազներն իրենից հեռացնել. այս առաջին գիշերն էր, որ նա իր ծնողական յարկից հեռու անցկացրեց: Կառքից ցած զալու ժամանակ լսած աղմուկը, մարդկանց ժխորը, շմեցնող միօրինակութիւնը, բոլոր այս օտար մարդկիկ—որովհետեւ համբարձումն էլ իր ճարտարութիւնը ցոյց տալու համար ոռւսերէն էր խօսում—աղատ լեռների խեղճ որդուն թւում էր այս ամենը, ինչպէս չար ողիների աղիտաբեր խաղ: Սարսափահար կանգ առաւ, կոկորդը սեղմուած, նրան հրում-հրմշտկում էին ու վրան չարանում իրեւ աւելորդ տեղ բռնողի: Իսկ երբ նա նկատեց կողքերից փալուն սրեր քաշ արած մի կարդ մարդկանց, որոնք ուրիշների վրայ գառում ու գէծքերը ծոմառում էին զալրագին, բռնեց համբարձումի թելից և ուղում էր ետ գնայ, վերագառնայ: Յե՛տ գնայ, երթաւ մինչեւ այն կանաչաղարդ դաշտավայրը ու շատապով, մեծ-մեծ, արագ քալերով կարէ անցնէ գաշտավայրը և բլուրների վրայով, ձմեռնալին գոմերի առշեկից, աղբիւրի մօտից զէպի Աղալիշէն զիմէ: Այնտեղ գէն շպրտէ խուրչինը, ծգուէ կանաչ խոտի վրայ, քաղցը չուր խմէ և մալրիկին պատմէ, թէ ի՞նչպէս սարսափելի էր ամեն ինչ այն տեղ՝ մեծ քաղաքում:

Համբարձումը նրան մտիկ չէր անում, այլ զլուխը թափ տալով՝ բաշ էր տալիս նրան իր ետեից: Իրենց հիւրընկալների մօտ, ուր նրանք այդ օրը պիտի մնալին, Տիգրանի վրգովմունքը կ'անցնէ: Զէ՞ որ աղատ լեռներից Բաքու եկող բոլոր մարդկանց հետն էլ նոյնն է պատահում:

Բայց այդ ամբողջ օրը Տիգրանն ինքն իրան չը գտաւ. իր խոշոր, մեղմ, սեւ աչքերը անհամարձակ կերպով յառում էին ամեն ինչի վրայ. վշտիցը ոչինչ կուլ չէր գնում. շրթունքները հաղիւ երբեմն շարժում էր

այդ օտար մարդկանց մօտ, ուր Համբարձումն առաջնորդել էր իրեն: Բնկերը իր փոխարէնն էլ էր խօսում, հայերէն և ոռւսերէն, ընդհանրապէս ոռւսերէն, որովհետեւ ուզում էր պարմենալ Տիգրանի մօտ: Բայց Տիգրանը չէր լսում, իսկի չէր էլ ուզում լսել: Նա ցանկանում էր ետ, դէպի տուն, դէպ Աղալիշէն: Տիգրանը ու արտօւմ սողոսկում էր նա մութն անկիւնները, որպէս զի իր վրայ ոչ ոք ուշը չը դարձնէ: Յետոյ, հակառակ իր կամքին, դուրս տարան փողոց. ուզում էին ցոյց տալ քաղաքը, նրան և Համբարձումին՝ որն արդէն մի անգամ տեսել էր:

Տիգրանին թւում էր թէ այստեղ մի տեսակ լարիւրինթոս է. այս սոսկալի փողոցները, ուր հալածականի նման փաղփռատում էին մարդիկ—բայց որքան մարդիկ, այդ ժխորը, քամին, երկու կողմի տնաբլուրները, կառքերի գղրդոցը, ու ու հեղծուծիչ կերպով մխացող ծխնելուզները, փոշին՝ որ յաւիտենապէս շարժում էր օղի մէջ, և սանդուխքների մօտ ու անկիւններում հաւաքուել-կիտուել էր ձեան նման: Նրան պատեց մի տեսակ թմրութիւն, որը քիչ անցաւ, երբ ծովելը հասան ու նկատեցին մի ընդարձակ մոխրագոյն տարածութիւն:

Ծովն էր այդ:

Նրա յոդնած, արտասուակոծ աչքերը դարմանքով յառեցին այդ տարածութեան վրայ: Ի հարկէ, երբ մօտացան և նա նանաչեց միապաղաղ ալիքները, որոնք կարծես մի ճնշման տակ ժանր ու դանդաղ ժիում էին, բոլորովին ուրիշ բան էին, քան այն ախորժատեսիլ, բիւրեղանման պարզ աղբիւրը, որ հոսում է Աղալիշէնից դէպի գոմերը՝ հովիտի մէջ, այն ժամանակ նրան պատեց առաջուանից աւելի ուժզին զզուանքի մի զդաց-

մունք դէպի ամեն այդ այլանդակ ու օտարոտի բաները: Ջուրն իսկ չուր չէր այստեղ. նրա նարպոտ մակերևոյթի տակ արտասովոր կերպով ծիածանագոյն փայլում էր, այնուամենայնիւ կարծր առարկալի նման դժուն ու անթափանցիկ էր նա: Աղտոտ ծովեղը տեսքը, ուր կարծես ողջ աշխարհն իր աղբը թափած լինէր, աարուերուող նաւերը, ջրի, ձկների, ձիւթի, թոկերի, և մանաւանդ, բոլոր միւսներին գերազանցող հօտը—նաւթի, քարիւղի հոտը, Տիգրանի նողկանքը շարժեցին:

Նա ծածկեց իր աչքերը. փորբիկ, նանապարհը կորցրած երեխալի պէս անհանգիստ էր նա: Բայց ահա ցոյց տուին աշտարակը, ծովից մի նանապարհով բաժանուած կարմրագոյն լուսաշտարակը, որն ուղղածիդբարձրանում է դէպի փոշեպատ երկինքը: Նրանք ուզում էին գնալ այնտեղ. Տիգրանը պէտք է հետեւէր: Համբարձումն իր դիտութեածը հպարտ, իր մտածոլոր ունկնդրին պատմեց աշտարակին վերաբերեալ առասպելը, այն աշտարակին՝ որ կառուցուած ժամանակ բոլորովին կալած է եղել ծովին, այնպէս որ ալիքները ողողում էին նրա սառուար:

«Բաքուի մի իշխան, կատաղի, բռնաւոր մի իսան, հարիւրաւոր տարիներ առաջ իշխել է այստեղ: Նա չար սէր էր տածում դէպի իր հարազատ աղջիկը՝ Լէլին, որովհետեւ աղջիկը գեղեցիկ էր: Եւ խանը ուզում էր նորան իր կինը գարծնել: Սակայն աղջիկը հակառակէց: Եւ երբ խանը նորան շատ նեղը ծղեց, Լէլին առաց. »Եթէ կարողանաս ինձ համար մի բարձր աշտարակ շինել ծովի մէջ, որպէսպի դարշելի եղեռնագործութիւնը լուսնից ի զատ ոչ ոք չը տեսնէ և բամիից ու ալիքներից ի զատ ոչ ոք չը կարողանայ լուել

հօրը՝ իր աղջկան հետ ունենալիք խօսակցութիւնը, որպիսին ունենալ նա չը պիտի համարձակուէր, այն ժամանակ ըստ կամքը կը կատարեմ, կ'երթամ աշտարակը և այնաեղ՝ թագնուած բոլոր մարդկանց աչքերից, կը բնակեմ ինչպէս քո կինը»:

Եւ խանը հրամայեց կանչել հեռու տեղերից ամենաճարտար որմնապիրներին և նրանք շինեցին աշտարակը ծովի մէջ ալնպէս, ինչպէս Լէյլին էր պահանջել—բարձր ու անմատչելի, դէպի ցամաքը կորածե, իսկ դէպի ծովը սրանկիւն դուրս ցցուած, որպէս ալիքները պատառող:

Երբ աշտարակը շինուեց-վերջացաւ, իշխանի աղջիկ Լէյլին, յաւ քօղաւորուած, միակ դռնովն աշտարակը մտաւ և վեր բարձրացաւ այս նեղ սանդուխըով, որով մենք ենք այժմ բարձրանում և նորա ետեից դնում էր խանը՝ նորա հայրը։ Եւ իւրաքանչիւր փոքրիկ պատրշամբի վրայ, ուր մենք այժմ դադար ենք առնում, կանգնում էր ե՛ Լէյլին ու իւր քօղի տակից տիրադէմ դուրս նայում։ Նորա մօա կանգնած էր խանը ու իր այրող, վաւաշոտ վազրի հայեացըով նորա քօղի տակից աշխատում էր զիտենալ նորան։

Երբ նրանք հասան ամենավերին կտուրը, ուր մենք այժմ ոտք ենք դնում և որն այն ժամանակ տւելի դէպի ծովն էր դուրս րնկած, Լէյլին պատռեց իւր քօղը՝ ծովային քամու առաջ պարզեց և ապա մի կտրուկ նիշ տրձակելով՝ ծովային թռչնի պէս ցած թռաւ փրփրագէզ ծովի մէջ։ Այդպիսով Լէյլին փրկուեց իւր հօր ձեռքից, որը հետամուտ էր նորա զեղեցկութեան։ Այդպէս արաց Լէյլին՝ խանի աղջիկը»։

Տիգրանը խիստ կարմրեց. պատմութիւնը յուզեց նրան։ Նա մտարերեց նարդիսին և վստահ էր թէ, ան-

շուշտ նարդիսն ևս խանի աղջկա՝ Լէյլիի պէս կը վարուէր, և իր հոգին նոր կորով ստացաւ։ Բայց վախեցաւ թէ մի գուցէ իր մտածութիւնները գուշակեն, ուստի և դէմքը կաս-կարմիր գարծաւ և նա շուռ եկաւ։

Հետեւեալ առաւտօն էլ վրայ հասաւ և Տիգրանը համբարձումի հետ դնաց Բալախանի՝ Բաքուի արուարձանը, իրենց աշխատավայրը։

*

Բաքուն երեցել էր մատղահասակ լեռնցուն ինչպէս ամենասարսափելի տեղը, որ կարող է գոյութիւն ունենալ աշխարհիս երեսին։ Այժմ նա տեսնում է Բալախանին։ Իսկ Բալախանին հարիւրապատիկ աւելի վատ է։

Բաքուն նա ակամայ հիւր էր եղել. իսկ այսակը նա պէտք է մնայ. մնայ և աշխատէ։

Բայց բոլոր այս արտառոց, օտարուախ, անրմբոնելի բաները արդեօք գէշ երազներ չէն, որ շըշապատել են իրեն ու յուզում իր միտքը։

Ինչո՞ւ չէ տեսնում ոչ մի ժառ, ոչ մի ցողուն, ոչ մի ծաղիկ. ինչո՞ւ գետինը երկարութեամբն ու լայնութեամբը կարատուած է երկաթէ գծերով. ինչո՞ւ համար դետնի մէջ բացուած են այն խոր վերքերը, որոնց մէջ կարծես թանձրացած արիւն լինի։ Ինչո՞ւ երկինքն այդպէս զորշագոյն է, այնպէս պղտոր, այնպէս լի զեղին պողիկը նի, այնպէս պղտոր, այնպէս լի զեղին զողիով։ Օդն ինչո՞ւ է կարատուած երկաթէ թելերով, շողիով։ Ոդն ինչո՞ւ է կարատուած երկաթէ թելերով, կաշէ լարերով, որոնք շարժւում ու հրճուացնում են։ Ո՞ւր են զրանք շարժող ձեռները։ Ինչո՞ւ իր սիրտն այդպէս ճմլւում է օսարութեան մէջ։ Ինչո՞ւ իր ականչներն այդպէս տանջւում են այս մշտական սուլոցից, դրուինից, աղմուկից։ Այն ի՞նչն է, որ այդ բոլոր օտարուածից, հրեշալին բաները՝ հաւասար հասատափոր կաթաներն ու ատամնաւոր անիւները, զլիի պտոյտ պատ-

հառող շարժման մէջ է պահում։ Եւ ինչո՞ւ համար են դրանք այդպէս անընդհատ շարժում, վեր բարձրանում ու իջնում ցախ, դորւում առաջ ու լանկարծ դարձեալ կանգնում, թաւալում դէպի լետ ու կրկին կանգ առնում։

Աղբակոյտի վրայի այս կեղտոտ թռչունները—կորող են դրանք հաւեր լինել։ Մէկի ձայնն այնպէս է հրճ-չում, ինչպէս որ Ազարիշէնում աքաղաղն էր խօսում. բայց այնտեղ աքաղաղները փալում են ոսկեդոյն ու ծիրանեգոյն փետուրներով. այստեղ նրանք նոյն տեսքն ունեն, ինչ որ իրենց շուրջն եղած ամեն բան—դետինը, տները, մարդիկ։

Ախ, այդ մարդիկ։ Ահա մէկը գալիս է իրենց հանդէպ, սև, իւղափայլ է ամբողջ դէմքը, բաղուկները, ձեռները. թռւիս ու իւղափայլ է նրա լայն, կոսիտ շապիկը. մի լարով մէշքին ամրացրած և ստորին ծալրերը կօշիկների մէջ խրած շալվարը կոշտ է ու լայն։ Եւ ահա այդպիսի մէկն էլ, դարձեալ մէկը ու կրկին մէկը։ Ամենըն իրար նման են. միայն հասակն է տարբերում նրանց։

Համբարձումը կանչեց մէկին. «Ճօ, Մկրտիչ, զու»։ Մէկը մօտեցաւ ու բացականչեց. «Համբարձում»։

Ինչպէս կարողացաւ համբարձումը ճանաչել իր բարեկամին, բանի որ ամենըն էլ այնպէս նման են իրարու. այդ սևորակ դէմքերի վրայ միայն աչքերն ու սպիտակ ատամներն են փալում։

Տիգրանը վախցաւ. մէկն իր անունը տուեց։ Իրենց շուրջը կանգնած սև մարդկանց մէջ փնտում է կանչողին. բայց ժանօթ կերպարանք չէ դտնում։

Ահա դարձեալ ձայն տուին—«Տիգրան»։

Մէկը մօտեցաւ, իր սև ձեռները Տիգրանի վիզը փաթաթեց, կեղտոտ միրուքը Տիգրանի երեսը բսեց և տաք, զօրեղ շրթունքներով համբուրեց նրան։

Այժմ նրա աչքերը բոլորովին մօտ էին Տիգրանին —այս մարդը Սիմոնն է արդեօք. սիրուն, հապարտ Սիմոնը, որի ետևելից բոլոր աղջիկները նայում էին, եղանակ նա Ազալիշէնում հրապարակն էր գալիս տօն օրերին։

Տիգրան սկսում է շատապ-շտապ, հարցալի, յախուռն կերպով խօսել. տնից մեկնելու օրից ի վեր խսկապէս առաջին անգամն էր նա իր բերանը բաց անում։ Սիմոնը —որովհետեւ դա Սիմոնն էր—զլուխն առշեր բաշ արտի նայում է նրա բերանը։ Ինչո՞ւ է կիսում նա իր յօնքերը. ինչո՞ւ է թափ տալիս զլուխը. ինչո՞ւ չէ պատասխանում, այլ երկու ձեռքը բարձրացնելով՝ ցոյց է տալիս իր ականջները. ինչո՞ւ պղտորւում են նրա աչքերը և հոսել է սկսում, այնպէս որ նրա սև ալտերի վրայ սպիտակագոյն զծեր են նկարուում։ Տիգրանն ուղղում է խօսել, աւելին պատմել, աւելի հարցնել. բայց խօսքերը չեն հասնում մինչև շրթունքները։

Ամենըն էլ հեռացան արդէն. մի բարձրագոչ սուլոց հնչեց ու նրանք շտապով բաշուեցին գնացին։ Ամենից վերջ Սիմոնը հեռացաւ, զլխակոր։

Դրանից քիչ յետոյ Տիգրանը կանդնած էր մի փոքրիկ խանութի մէջ. Համբարձումը դնեց նրա համար շապիկ, շալվար, հասարակ կաշուց մի զոյտ կապերով կօշիկներ—Տիգրանի աշխատանքի շորերը։ Մի կառատան գուան ետեւ հագնուելու էր և վազը գառնալու էր մէկը նրանցից՝ որոնք իրեն այնպէս սարսափ էին ազգել, նոյնպէս սևածած, նոյնպէս աղտոտուած, ծիւթի մէջ նոյնպէս կեղտոտուած, ինչպէս որ միւսներն էին։ «Ի՞նչ կ'ասէ մալրիկս, եթէ ես էլ այնպիսի մէկը դառնամ. նարդիսն Ք'նչ կ'ասէ. ինչպէս ծիծաղելու է ինձ վրայ»։

Տիգրանը հագաւ աշխատանքի շորերը. իր ունեցած չունեցածը նախշուն խուրչինի մէջ պահեց. Համբար-

ձումն ասաց, որ տանից բերած հագուստները նա պէտք է հագնէ կիրակի օրերը: Եւ խուրչինը դրեց մի փայտէ տախտի վրայ՝ մի անլուս խորշի մէջ, որտեղ էլի շատ ազգակի տախտեր կան, բոլորովին իրարու մօտ շարած — մի երկար շարք: Այսաեղ, նանների այս խուռն երամի մէջ քնելու է և ինքը:

Նա հէնց իսկոյն քնել ցանկացաւ. սաստիկ յոդնել էր բոլոր այդ նոր, քսամնելի բաներից, մանաւանդ այդ աղմկայոյդ ժխորից, որ ամբողջ օդն է լցնում, ինչպէս տղակութիւնն ու գարշահոտութիւնը: Բայց համբարձումը չը թողեց. խոհանոցի միշով գուրս տարաւ նրան:

Խոհանոցը նիշտ ննջարանի նման մի փայտէ խրբ- ճիթ էր, միայն աւելի նեղ: Այնաեղ կար մի վառարան նաւթի թանձր ծխով. երեսում էին ներս ու դուրս ա- նող սև կերպարանքներ: Տիգրանը տեսնում է որ նրանք խօսում են, բայց ինքը ոչ մի խօսք չէ լսում. չը լինի թէ ինքն էլ արդէն խլացել է Սիմոնի պէս: Կամ զուցէ մերձակայ ու հեռաւոր մերենաների ճռնչիւնն է անլուկի դարձնում խօսքները: Այսաեղ զբաղուղներից մէկը բռունելով Տիգրանի թեկից ետ քաշեց և մի բաժակ թէյ առաջարկեց: Դարձեալ Սիմոնն է. թերեւս, — այս ծխապատ ծակի մէջ ամենքն իրար նման են երեսում:

Տիգրանը կամեցաւ խմել. ճակատը բրտնաթաթախու էր եղել: Բայց բերանը ետ քաշուեց յանկարծ, կարծես այրուած լինէր. խմիչքը նրան խիստ անախորժ թուացր խիստ նման շրջապատող օդին: Նա ծարուից պապակում էր, այնուամենայնիւ չը կարողացաւ խմել: Այս, Աղայիշէնի աղբիւրից, այն քաղցրահամ, կանաչապատ աղբիւրից ինչպէս կ'ուզենար նա բռով մի անուշ ումսր անէր:

Խոհանոց է արդեօք այս կեղտուա խորշը, վառա- րանի շացող խուփերով, որոնց տակ վառւում է նաւ- թի ծխացող մրացող բոյքը: Տիգրանի մտքի առաջ պատ- կերացաւ իրենց տան գուրեկան թոնիրը և եղեղնէ ցիցե- րից քաշ արած նախշուն կաթսավերները և միւս կողմը աղիւրի՝ մարդահասակ բարձրութեամբ կաւէ շահմա- րանը՝ քանդուկը, որի վրայ դրուած մի փայտէ տաշտի մէջ անուշահոտ, նոր-եփած հացն է, շտապեկեր երե- խաների ծեռքին անմատչելի: Նուրշը պմառներ ար- ծակող եռոտանի կրակարանի՝ մանղալի, մօտ, պա- տիցը քաշ է արած աղի նախշուն հովուական տոպրակի: Մանղալից բարձր, պատի մի խոռոչի մէջ զրուած է նաւ- թի հողէ հրաղը և ծխում է աշնան երեկոյին: Այս, բայց Աղայիշէնի նաւթը, որ բերում էր վաճառողը աղի ու քարիւղի հետ ուղտի վրայ բարձած, ամենեին այն- պէս զզուելի չէր երեցել իրեն. երբ ուղտապանը գալիս էր իր բեռնած անասունի հետ և երբ հնչում էր զիւղի մէջ նրա բարձրագոչ ծայնը — «Է՞ աղ առնող, Է՞ նաւթ առնող, ծիւթ առնող», ո՞րպան ուրախ ժամանակ էր անցնում զիւղում:

Ինչպէս ամենքը կհուններն ու ամաններն տուած մօտ էին վազում և ծուղը ու կտատկով, զոռու մ-զոչու- մով և լիշոցներ արծակելով առուտուրն սկսում: Իսկ չոքած ուղտի շուրջը հաւաքւում էին զարմացած երե- խաները և ուրախանում ու իրար ցոյց էին տալիս, թէ ինչ- պէս այդ անասունը խելացի կերպով թարթում էր մար- դու աչքերին նմանող իր աչքերը:

Կաշէ տիկը բացւում էր և թանձր ու թուխ գոյ- նով նաւթը հոսում էր երկու կանթով հողէ տմանի մէջ և վաճառողը վերցնում էր զրտ փոխարէն զարի ու ցորէն:

«Ե՞լ Տիգրան, գնանք»:

Տիգրանն արթնանում է: Հեռու, հայրենի լիշողութիւններ. նա կրկին Բալախսանումն է: Նա զարծեալ այս ազլանդակուած, կտրատուած երկնքի տակն է, խոպան, կտրատուած երկրի վրայ:

Համբարձումը առաջնորդում է նրան դէպի աշխատութեան տեղերը: Դրանք առանց ոստերի անտառի պէս կանդնած են իր առշև, գեղին տախտակէ աշտարակների մի տգեղ անտառի պէս, բարձր և օդաւէտ, թեքուած պատերով, լայն, մուլթ դռնածակերով, որոնցից լսւում է աւելի սաստիկ աղմուկ, երկաթ երկաթի վրայ զարնուելու շառաչ, ճռնչող տնքտնքոց և հսկաների հեծեժանք: Լուռում է նաև ցասկոտ, որոշ տակտկով հնչող մարդկանց ձայն:

Սնասելի կերպով աղտոտ է վիշկաների շուրջը. փայլ-փրլող չքակոյտերի մէջտեղ տնաչափ բարձրութեամբ դիզած է փորած դուրս հանած հողը: Այն սև կերպարանքներից շատերը հարեանցի կերպով աչքերնին վեր բարձրացրին, երբ Տիգրանը նրանց առշևից անցաւ. նրա հագուստները գեռ ևս նաւթով չէին թաթախուած, նրանք գեռ կանեփի սկզբնական՝ գորշագոյն-գեղին դոյնն ունեին և մասնում եին Տիգրանի նորեկ լինելը: Ցեխի և աղտեղութեան միջից առաջ շարժուեցին նրանք:

Վիշկաներից մէկի մէջ՝ որից տուանծնապէս սաստիկ աղմուկ է լուռում, ներս մտաւ Համբարձումը և Տիգրանին քաշ տուեց իրեն հետ: Սա մնաց մուտքի մօտ կանդնած, երկիւղով, փախչելու պատրաստ. մինչդեռ իր ընկերը մօտեցաւ մի մարդու, որը փողերաւոր կօշիկներ ուներ հազին, շալվարի ստորին բերանները մէջն էր խրած և շապկի վրայից էլ մի բաճկոն ունէր: Լայն միրուքով և փոքրիկ պսպղուն աչքերով մի մարդ էր:

Ահա նա զուում է. Տիգրանին նշան է անում որ մօտենայ: Տիգրանը հասկացաւ, թէսկէտ միայն նրա շարժուածքից, որովհետեւ աղմուկը շատ մեծ է և կլանում է ծայները:

Տիգրանը մօտեցաւ և երկարավող կօշիկներով մարդը իր փոքրիկ, վառվուուն աչքերը նրա վրայ սեեռելով, նրան վերցցվար լաւ դիտեց: Համբարձումը մինչև անդամ բռնեց Տիգրանի ծեռքից ու շուռ տուաւ նրան. «այ, ուժեղ տղայ է»:

Ինչպէս որ զիւղացին ծախու զնելիք հորթը կը դիտէ, այնպէս էլ վարպետը դիտեց այս նոր մարդուն: Չեռքի մի շարժում, զիշանող, հպարտ շարժում. ընդունուած:

Ուրախացին, Տիգրան:

Մօտ եկ ուրեմն, զու աշողակ մատղահաս հովիւ, երկրագործ, որսորդ, ալսաեղ ուրիշ տեսակ աշխատանք է պահանջում, որի մէջ քո առաջին փորձերդ կը լինին անաջող, անպատեհ և դժուար: Եթէ միայն ուժեղ կերպով ձեռքդ մեկնես, եթէ միայն տոկուն ու զիմացկուն կերպով քո կարթը բռնես, այն ժամանակ զու պիտանի ես: Այստեղ զիսի պէտք չը կայ. այս աշխատանքը զօրեղ մկանունքներ, հուժկու, թարծ անդամներ է պահանջում:

Տիգրանը բերանաբաց նայում է ապշաբար: Վիշկայի մէջտեղը մի տախտակամած կար, սև կերպարանքներով լիքը: Նրանց մէջն է նաև զուացող վարպետը՝ հպարտ, պլատուն աչքերով:

Տախտակամածը ժածկում է մի փոս. տախտակները ճոռմ-ճորնչում են այդ մարդկանց ոտնատակին: Եւ այդ սև մարդկանց զիսին, ուղիղ նրանց զութաների վրայ կայ մի սև, ծանր, երկաթէ լախտ, կամ թէ դա մի հսկայա-

կան կացին է գուցէ, սրածալը, դէպի ետ զարձրած բերանով։ Մի շառաչող շղթալից կախուած է այդ անհոռնի խոշոր բանը, որի ծուլածոյ կոթք նեղ սանդուխըների և լաստանների վրայ կծկուած մարդիկ երկժանիներով պահում են, երկաթէ կարթով հաւասար ուղղութեամբ ետ են դարձնում։ Ալդպիսի մի գործիք էլ Տիգրանը պիտի ստանայ և յետոյ իր ամենօրեայ աշխատանքը պէտք է կայանայ նրանում, որ այդ գործիքը ձեռքին՝ աչքերը պիտի սեեռէ երկաթէ շարժուն ծողի վրայ, միւսների հետ միասին ինքն էլ ուղիղ ժամանակին բռնէ, հրէ և ուղորդ կերպով մղէ դէպի ցած այն ամենը, ինչ որ ախտակամածի մէջտեղի ծակով ցած պիտի դնայ—փորող մեքենան ու խողովակները, աւելի ու աւելի խորը մղէ դէպի ցած, նաւթի հորի մէջ։

Խորհրդաւոր կերպով եռում ու յուղում է խորքերում. վերը կրկչում ու ճռնչում է մինչև վիշկալի գաղաթը հասնող շղթան, որովհետեւ այն անիւր, որի վրայով շրջում է նա, կիսաթագուն տեղաւորուած է այնտեղ, վերը, կտուրի գերանների միջև։

Այն ի՞նչ ուժ է, որ վեր ու վար է շարժում այդ ահազին ծանրութեամբ մեքենան։ Համբարձումն արդէն պատմել էր Տիգրանին, որ շղթաները մշանչենապէս փաթաթում և կրկին քանդում են. իշնում են ներքեանը իորի մէջ, ծողերն ու խողովակները աւելի խորը մղելու համար, մինչև որ նրանք անտեսանելի կերպով սուզուեն նաւթում։ Միայն վարպետի մտաւոր հայելին է, որ լոյս է թափանցում այդ խորութեան մէջ։

Դրեթէ աննկատելի բարձրանում է այն ծանր գործիքը. յանախ մի օրից աւելի է տեսում, մինչև որ վեր է բարձրանում, որպէսզի զարձեալ ցած ընկէ։ Ի՞նչ ուժ կարող է բարձրացնել ալդպիսի մի գործիք։

Ի՞նչ է նշանակում այդ փոնչառը, այդ գոռում-գոչում-ներն ու երերումները վիշկալից ոչ հեռու շինութեան մէջ։

Այնտեղ կաթսան է, ասում է Համբարձումը։ Տիգրանը չի հասկանում, կաթսան։ ի՞նչու համար։ ի՞նչ կերակուր են եփում այնտեղ. անշուշտ փլաւ չէ այն կաթսայի մէջ եփածը։

Ուշապլութիւն, Տիգրան, այժմուանից գու մերենալի մի մասն ես միայն. արժմուանից գու միայն մի կարթ ես, և կարթի ի՞նչ հողն է թէ ի՞նչ է կատարում։ Նա պէտք է միայն պինդ պահէ։

Վիշկալի հարեան շինութեան մէջ շողեմեքենան՝ ծանր-ծանր շնչող, բեռան տակ ընկնուած մարդու նման տնքում է, պը՝ պը՝ ————— պը՝ պը՝ ————— պը՝ պը՝ ————— պը՝ պը՝ —————

Յետոյ յանկարձ, երբ ծողը արձակուելով շղթալից՝ գետնում վորած ծակի մէջն է զլորւում, մեքենան զուարթանում, դառնում է եռանդուն. ամենալն արագութեամբ շունչ է առնում նա թեթեամիտ կերպով. պը՝ պը՝ ————— պը՝ պը՝ —————

Բայց սպասիր, ալդպէս գուրեկան ես ուղում դարձնել կեանքդ։ Եկ, բամինդ վեր առ, գու հեշտութեամբ ճօնուող շղթայ. կեռդ մօտեցուր, որպէսզի գործիքը քո մասնիկներին ամրացնենք կրկին։ Այժմ էլ այդ փորձիր։

Եւ օղակը գտնում է կեռը և գործիքն իշնում է, սուզուում, փորփորում ու կրկին վեր բարձրանում. դանդաղորէն ու դժուարութեամբ սկսում է նորից՝ պը՝ պը՝ ————— պը՝ պը՝ ————— պը՝ պը՝ —————

Գործիքը թաղւում է հորի մէջ և հող, աւազ, խարող յեխ, ալի չուր նաւթի հետ խառն, գուրս է բերում ծակից։ Եւ այդ ամենը հոսում է գործաւորների զլխի վրայից, որոնք իրաւունք չունեն իրենց տեղից շարժուե-

լու, բոլոր այդ իւղից, ծիւթից, այրող չըից խուսափելու: Օրուալ աշխատանքը վերջացնելուց յետով զորժաւորները վերջնում են մի բուռը գրչվիք կանեփ, թաթախում նաւթով լի ամանի մէջ և գրանով վայրիվերոց մաքրում են ձեռները ու յետով քարիւղով լուսանում:

Տիգրանը սարսափով է նայում այդ բոլորին. բայց շուտով կարիքն ստիպում է նրան օրինակել իր տեսածը՝ Մի քանի օր չանցած կարծրացաւ նրա շապիկը. նոյնպէս և վարտիկը իւղից ու ծիւթից այնպէս բրտացաւ, ինչպէս միւս բանուարներինք: Հագուստները խէժից ու ծիւթից կոշտացան, աւազի և փոշու շերտերով ծածկուցին. ծանր ու կոշտ, չըի և օդի համար անթափանցիկ դարձան:

Եւ այժմ օրը մթնում ու լուսանում է միօրինակ, սպանիչ դանդղութեամբ: Առաւօտ կանուխ պէտք է երթալ այդ վտանգաւոր աշխատանքին. բայց ահազին ծանր տապարի ցած պոկուելու կամ հէնց ուղղութիւնից շեղուելու դէպքում նրանից չարդ ու փշուը լինելու սպառնալիքը, կեանքի համար վտանգաւոր դրութիւնը, դառնում է սովորական ու այլ ևս միտք չէ յուղում:

Կիրակի է գալիս, հագնում է Տիգրան իր գիւղի հագուստները, նստում է ընկերների հետ միասին և ձեռքը երեսին նեցուկ տուած՝ երգում է ողբաղին ձանով՝

Քաղցրանուշ՝ Աղալիշէնի աղբը չուրը,

Դառն-լեղի է Բալախանու աղի չուրը,

Հայրենի շէնի Մշատակը քաղցը է,

Իսկ այստեղ կարօտն ինձ միշտ տանջում է:

Եւ միւսները կրկնում են. անվերջ ողբի նման հընչում է շինութիւնների շուրջը՝

Իսկ այստեղ կարօտն ինձ միշտ տանջում է:

Մի խումբ աննկարագրելի աղտոտ հաւեր կէկչալով շրջում են նրանց մօտ. մէկ խիստ կեղտոտ ծիտ շարժւում է տախտակամած կտուրի վրայ: Տիգրանը զիտելով այդ թռչուններին, փոխեց եղանակը ու միւնոյն մեղմ, ողբաղին ձայնով վերսկսեց երգել.

Սիստակ էր բազէն, երբ սարը թողեց,

Այժմ սև է փետուրն, աչքն էլ պղտորուած.

Թէ նա դէս' իր բոյնն ետ թռչէ նորից,

Միրոյ հայեացը կը մնայ զրկուած:

Իսկ համբարձումը դլուխն է թափ տափս Տիգրանի երգերի վրայ: Նա էլ տխուր է, նրա համար էլ ծանր է ու տաղտկալի. բայց նա ուղղում է ծիծաղել ու միւսներին էլ ծիծաղեցնել: Դէմքը ծոճռելով ցոյց տուեց իր իւղալի մաղերը, նայեց իր հարպոտ ձեռների վրայ ու երգեց.

Շիշիկը լողում է հարսկի մէջ,

Իսկ համբարձումը՝ նաւթի մէջ.

Ճարպի վրայ նուռը քամէք,

Մի լաւ շիշիկ պատրաստէք:

Մինչդեռ միւսները բրքիչ բարձրացրին՝ Տիգրանը հազիւ ժղտաց. բերանը ծամաժռելով ծարպկութեամբ վրայ բերեց.

Ինչպէս որ շիշիկը լողում է հարպում,

Այդպէս լողում է համբարձումը նաւթում.

Շիշիկից բուրում է բայց անուշ հոտ:

Իսկ նաւթից զալիս է զարշելի հոտ:

Եւ ամենքը ծիծաղեցին համբարձումի վրայ, որն ամօթապարտ եղած՝ լոեց:

*

Եկան տաք ու տօթագին օրերը: Շուաքից, ծածկութից զուրկ անապատի մէջ արեն իր շերմութիւնը այն-

պէս թափում է աւազի վրայ, որ գործաւորների ոտները
կ'այրուին, եթէ երբէք հաճարծակուին ոտարորիկ քալլել:
Եւ Տիգրանը մտաբերում է հեռաւոր Խալարի բլուրը
և իր կարօտը փոխում է երդի—

Սաղարթները դով շուաք են ծզում
Այնտեղ՝ վերը, Աղայիշէնում.
Իսկ ես այստեղ Բալախանում:
Փոշու մէջն եմ տառապում:
Վարդերը լի են բուրմունքով
Այնտեղ վերը, Աղայիշէնում.
Այստեղ օդն ինձ խեղդում է,
Այստեղ վարը, Բալախանում:
Իմ ծաղիկն է փրթթել հեռուն
Այնտեղ վերը, Աղայիշէնում
Ախ, ոչ մի աստղ ինձ չէ փալում
Այստեղ վարը, Բալախանում:
Նախամեծար է որ մեռնեմ
Այնտեղ վերը, Աղայիշէնում,
Քան թէ այստեղ մենակ ապրեմ,
Այստեղ վարը, Բալախանում...

*

Մարդ կարող չէ միշտ տիրել. Երիտասարդ ուժերը
միշտներ են որոնում իրենց վիշտը մոռացութեան տալու
համար: Նրանք խմում են օդին, ինչպէս որ պարոն կա-
ռավարիչը կլուրի պարոնների հետ նամպանի զինին է
խմում: Յետոյ հայրենիքի կարօտը կոյր կատաղութեան
է փոխում դէսլի իրենց ընկեր-գործաւորները և ամեն
օր մի որեւէ կոփւ պատահում է. ապա անյատանում է
զրանցից մէկնումէլը.—Ուր մնաց նա...

Անվարժ, զանազան կողմերից եկած, իրարու հազիւ
հասկացող բանուորների հետ աղէտներ էլ են պատահում

ամեն օր: Տիգրանի տեսած մարդկանց մէծ մասը ալլան-
դակուած են. մատները պակաս ծեռների և ոտների, մէկ-
թեանիների և միականիների վրայ նայելով՝ սարսափած
դիտում է նա տանչող ծանր աշխատանքի սպիները: Նո-
րեկին ամեն քալլափոխում վտանգ է սպառնում:

Ցածաքած ու անուշագրութեան մատնուած հո-
րերը՝ հազիւ նկոտելի մի սպիտակ խուփ վրանին, ար-
ծակ ընկած են այս ու այն կողմ: Բայց վայ այն ոտ-
քին, որ թաց ցեխի մէջն է ընկնում. նա թաղւում է
մէջը, ինչպէս որ ծանր գործիքը խրւում է թով, իւզոս
աւազի մէջ: Աշխատավայրերի արանքներում խոր յա-
տակներով նաւթի ամբարներ, տակը ջրով լի նաւթի լճեր,
որոնց վրայով պիտի անցնեն մարդիկ ցերեկուաչ թէ զի-
շերուայ աշխատանքի համար վիշտաները գնալու դէպ-
քում, բերանարաց սպասում են անզգուշներին: Ելեբարա-
կան լուսը ամեն տեղ խօ չէ հասնում. և յոդնածութեան
ժամանակ...

Ուր մնաց Մկրտիչը. Նրա մասին ոչ ոք բան չը
գիտէ: Նո կուլ է զնացել, անլայտացել է: Ընկերները
կանդնած՝ հարց ու փորձ են անում միմեանց. Թափա-
հարում են զլուխները և ապա, երբ սուլոցը հնչում է,
դարձեալ իրանց աշխատանքին են զնում:

Տիգրանն էլ իր կարթն է բռնել, թախմալի, քնա-
թաթախ աչքերով. այդ ամեն իրար խառնուած աղմու-
կից նրա զլուխը շշմել, ականջը կժժում էր:

Որ հայրենիքի կարօտը այսօր առանձնապէս զգալի
եղաւ Տիգրանին՝ լեզգին է մեզաւոր, հասանը, որի կարթը
իր ծառայութիւնն ընդմիշտ թողնել ուզեց: Հասանը մի
նշանած ուներ տանը, բայց Խաթունը գուցէ մի ուրի-
շին առնէ, եթէ ինքը իր վերադարձը շարունակ յետա-
ծզէ: Լեզգին յանկարծ մտաբերեց այդ և զրա համար

իր կարթը մի կողմ նետեց: Հասանը իր նախորդ ամսուալ ռօժիկով մի արձաթէ գօտի էր գնել Խաթունի համար. վարպետի կինը, Բալախանու սակաւթիւ կանանցից մէկը, պահում էր այդ, մինչեւ որ Հասանը կարողանար իր նշանածին տանել: Բայց ի՞նչու չը տանել նրա այսօրն ևեթ կամ վաղը: Ինչու սպասել և միշտ սպասել: Եւ Հասանը դէն շպրտեց իր կարթը:

Բայց ահա վարպետը սասարիկ զայրացած՝ դոռաց. «Ի՞նչ, տուն դնալ, կորիր, չը լսեմ. դու զարբին պէտք է դառնաս: Ես նրան դարբին եմ ուղում դարձնել և նա ուղում է փախչել: Զե՞ս ամաչում. ամիսը երեսուն րուբլի ես ստանալու. երեսո՞ւն րուբլի: Ամօթ քեզ»:

Եւ Հասանը աչքերը դետինն է ծդում. նա իրօք ամաչում է: Ամիսը երեսո՞ւն րուբլի: Վարպետն է ասում երեսուն: Դէն, նա կը մնաց գեռ, երեսուն րուբլի կը շահէ, մի քանի ամսից լեռոյ տուն կը դառնայ, մի դոյդ եղ կը գնէ և բարեկեցիկ զիւղացի կը դառնայ:

Նա կանգնել ու մըթմըթում է, իբրթէ չէ ուղում, բայց վարպետն արդէն նկատեց, որ նա միայն նազ է անում: «Հեռանալ, ամօթ քեզ: Գնա աշխատանքիդ»: Եւ Հասանը դարձեալ իր աշխատանքի զլուխն անցաւ, զրժեալ, ատելութեամբ լի հայեացըով: Եթէ վարպետը հրամայում է, էլ ի՞նչ կարելի է անել...

Եւ զիւակները ճռնչում են, փոկերը ճռացնում, անիւները գորդուում, շողեմեքենաները տնքում են և բոլոր այդ մերժակայ աղմուկի ետեւից ցնցղաւոր վառարանի մշտական պուշացն է լաւում: Տիգրանը տեսել էր այժմ այդ վառարանի ինչպէս լինելը: Նրա վրայ ամրացրած խողովակի նեղ նեղբից մի կաթիլ նաւթ է կաթում շողիի հոսանքի մէջ, մի կաթիլ և էլի մէկը ու այդպէս շարունակ անհամար կաթիներ, ցերեկ ու զի-

շեր. շողին առնում է կաթիլը ու դարձնում նրան չափաղանց նուրբ, մանրամաղ փոշի, որ ալրուելով՝ տաքացնում է ու շողի գոյացնում: Եւ զրանից ուժ է ստանում շողեմեքենան, շողին վշշում է խողովակներում և շողեմեքենան շարժում է լժակները և լժակները յետ ու առաջ են հրում շարժուն ձողը, որ բարձրացնում-իշեցնում է երկար ու ծանր հորփորը և հորփորը պտաեցնում է շղթան և շղթան դարձնում է վիշկայի կառւրի զերանների մէջտեղ դառնուած անիւր և անիւր շուռ է տալիս շղթան մի ծացրից միւսը, որից փոխ առ փոխ կախում են լախար, կամ ծողերը, կամ խողովակները, որ պէտք է բաց թողնուին հորի մէջ: Համբարձումն ասում է թէ այս սկզբնական աշխատանքը մի քանի ամիս է տեսում, մինչեւ որ նախաթին հասնեն:

Իւրաքանչիւր խողովակը իր նախորդ, կիսով չափ գետնից գուրս մնացած խողովակի հետ գուրդամւում է և դարբինների մուրճերը հնչուն շառաչմտք և ծանր գլրդիւնով շրիկում են երկաթէ դուրդամերի վրայ, որոնց նեցուկ է առւած կարթը:

Ուրեմն Հասանը այլպիսի մի դարբին պիտի դառնայ, և ամիսը երեսուն րուբլի պիտի շահէ, և ինչպէս ունեոր մարդ՝ ետ դառնայ իրենց զիւղը և հարսանիք անէ: Երջանիկ Հասան, մտածեց Տիգրանը:

Բայց Հասանն ուր է. Տիգրանի ու իր բնկերների զիմացն եկող զիշերալին բանուորների միշից ի՞նչու է զիմացն եկող զիշերալին բանուորների իրար հետ բարձրածայն բացակայում նա: Բանուորներն իրար հետ բարձրածայն խօսակցում են՝ չը նայած իրանց լողնածութեանը: Ուր մնաց Հասանը...

Կնճռուած ճակատավ մէկը ետեն է ցոյց տալիս — «այնտեղն է»: — Ուր է. Փախել է:

Տիգրանի սիրտն ուրախութիւնից արագ բարախեց:

«՚իւանդանոցումը»: Այն սև մարդկը ծախս ծեռքովն աչ դաստակի վրայ այնպէս խփեց, որ կարծես մի ձուրճ լինէր: Ապա մըմռալով շարունակեց իր ճանապարհ...

Տիգրանը հասկացաւ... Նրա սիրար նուազեց, ձեռ-
ները դողացին...

Իրիկնապահին Տիգրանն ու Համբարձումը զնացին
հիւանդանոց, ուր տարել էին աղետեալին՝ պատգարակի
վրայ բարձած։ Տիգրանը սարսափով դիտեց Երկու կարգ
մահակալներ շարած նեղ, ճանճերի բզզոցով լի վայրը։
Իւրաքանչիւր մահակալի մէջ պառկած է մի վիրաւոր։
Աղտոտ ու ճնշող է հիւանդանոցը և այս զունաթափ
նիհար կերպարանքները՝ պառկած իրանց անկողիններում,
հիւաղների են նմանում։ Հասանի համար տեղ չը կար։
Նրան պառկեցրել էին յատակի վրայ։ Մանր քնի մէջ է
նա, այտերի վրայ արցունքն է չորացել։ — «Նրա աչ ձեռքը
կտրել են, ասում է սպիտակ գոգնոց կապած զթութեան
քոյլը։ այդ ձեռքն ազես ոչնչի պիտանի չէր»։

Տիգրանը զննեց իր սեփական ձեռքը. ձեկնեց ու էլի ժաղեց. Այլև ոչ մի բանի պիտանի, կարաճ...

Մի փոքրիկ դռնից ներս մտաւ բժիշկը, արխինուտ
էր նա. Խիստ հայեացը ով դիտեց սրանց. «Ի՞նչ գործ
ուներ այստեղ, հեռացէր, դուքս»:

Համբարձումն իսկոյն կատարեց հրամանը, դէ նա
ռուսերէն հասկանում էր: Բայց գուրաը կրկին կանդ
առաւ և մերենայօրէն հետևող Տիգրանին քաշեց մի ցած
պատուհանի մօտ: Ներսը մի ուրիշ բժիշկ կար և սեղա-
նի վրայ, հազարաւոր ճանճերի մէջ, վեր էր լնկած մի

Ճերկ ճեռեալ: Բժիշկն իր երկար ու բարակ դանակը
դիմակի կուրծքը խրեց...

Տիղրանը դուռակով ետ ցատկեց. այս սարսափելի
վայրում մեռեալներին անդամ պղծում էն...

Ամբողջ զիշերը տանջող գէշ երապի մէջ էր օրդրամսը.
գեռ երբէք մահուան մասին չէր մտածել: Մի անգամ
մեռնելուն մօտ էր եղել այնտեղ՝ Աղալիշէնում: Այն ժա-
մանակ արջերին հալածող գիւղացիների խմբի մէջն էր
սողոսկել նա: Յետոյ յանկարծ մենակ է մնում և նրա
առջեր գուրս է թռչում աննոռնի թաւարշը: Նա ար-
ձակում է իր հրազէնը. ապա մի հարուած ստանում ու-
ալլես ոչինչ չէ զգում: Մի քանի ժամից յետոյ միայն
արթնանում է և տեսնում, որ ամենքն էլ գովարա-
նում են իրեն. ուղիղ արջի սրտին էր հարուածել: Սատ-
կած զաղանի ոտքերի տակիցն էին գուրս բերել նրան:
Դրա համեմատ Տիղրանը երեսկալում էր թէ մահը մի
արշ է և ոչ այնքան վատ բան: Այն օրուայ մասին նա
անդուրեկան լիշողութիւն չէր պահել, այլ ընդհակառակն
հալարտանում և ուրախանում էր: Երբ նարդիսը իրան
շօյել ուղենար, արջասպան կ'անուանէր:

իսկ այստեղ, այս անիծուած վալրումն, այդ ար-
շասպանը պառկել էր տախտի վրայ և սարսափում էր
ձահից, ամբողչ երկար զիշերը, սասափիկ կարօտել էր մօքը,
շատ փափագում էր տուն դառնալ։ Եւ երկիւղը խտա-
նալով՝ խօսքերի վերածուեց, խօսքերը շարուեցին իրար
կողքին և նրա անձկալի սրաի բարախիւնը տական էր
տալիս։ Միւս օրը դարձեալ մի վշտալի երդ լորինեց Տիգ-
րանը։ Միապաղադ է այդ երզը—

Դառն է զուրբ օտարութեան մէջ:

Օտար էրկրի մէս դառն է հացը.

Թէ տեսնէր ինձ մալրս օտարութեան մէջ,

Մահուան դուռն կ'հասցնէր հորան իւր լազը:
Դառն է աշխատանքն օտարութեան մէջ,
Տօթ գիշերին՝ գառն-աղի է քունը.
Թէ տեսնէր ինձ մալրս օտար երկրի մէջ,
Լայ կը լինէր նա գիշեր ու ցերեկ:
Դառն է կեանքն օտարութեան մէջ
Դառն է նոյն խակ սև հողը մահուան.
Թէ մեռնէի ես օտարութեան մէջ
Մալրս ինձ կ'հետեւէր մինչեւ գերեզման:
Դառն է որսկանի կեանքն օտար երկրում,
Ճերմակ աղաւնին ճախրում է անահ—
Տեսնէ որսկանին նա այս խորթ երկրում,
Նրան կրկին ճանաչել դժուար կարենայ:
Եթէ ես այստեղ պիտ' իշնեմ սև հող,
Թէ այստեղ մեռնեմ մոռացուած, անողի—
Ախ, այն ժամանակ իմ անձնանուէր
Մալրս քար կուտէ, քացախ կը խմէ:
Տիզրանը մի քիչ միխթարուեց իր սեփական խօս-
քերից. սակայն նրա բոլոր ընկերներն ել արտմեցին: Շու-
տով սովորեցին նրանք այդ երզը և երեկոները, խուցերի
շուրջը, ողբածալն հնչում էր տիրապին ու վստահ շեշտով՝
Ախ, այն ժամանակ իմ անձնանուէր
Մալրս քար կ'ուտէ, քացախ կը խմէ...

Եւ վիլակները ճռնչում, անիւները գորգոսում, փոկերը ճռացնում, ու հրամայողական գոչերը հնչում են — «բաս—բօշ, բաս—բօշ, (ճնշիր—թող, թուրք. զործձ. բառեր):

«Բան»—և փոկը սուրալով՝ պտտեցնում է աշխատութեան անիւր, որ հորից դուրս է քաշում փորող գործիքը: «Բօշ»—և փոկը արձակ անիւի վրայ է ըրշ-

ւում ու հորիորը ցած իշնում։ Ամեն օր ու ամեն զի-
շեր։ Հասանի փոխարէն մէկ ուրիշն է աշխատում։ միւս
ամեն ինչ նոյնն է մնացել։ Շարունակ աղմուկ, աճապա-
րանք ու միւնոյն ժամանակ ձանձրովթ։
Գործը երբէք անարգել առաջ չէ դնում։ ամեն օր
մի անախորժ արգելառիթ, ծգծգող բան պատահում է,
որևէ անսպասելի արգելք երևան է զալիս։ Կոտրւում
է մի ծող և ամբողջ ծողաշարը լնկնում է ներքեւ։ ա-
ւաղի խցան է գոյանում, ամբողջ ծակը լցնում և խան-
գարում է աշխատանքը։ Այսօր էլի մի արտասովոր բան
է պատահել «Նօմէր 57» վիշկայում, ուր Տիգրանն է
աշխատում։

Հորի խորութեան մէջ խողովակիր դէմ է առել՝ կանգ-
նել և աւելի խորը մզելն անհնար դարձել։ Այստեղ սա-
տանան, կարծես ծանծրացած անվերջ աղօնուկից ու ան-
հանգստութիւնից, ամբողչ խողովակաշարը իր ճանկե-
րումն է բռնել վերջապէս ու այլևս թուլ չէ տալիս
երկրի սիրար փորփորել։

Փիսուն հողը հողհանի միջոցով դուրս հանելուց
գտատարկելուց յետով, մի նոր խողովակ դուրդաձեցին, օպա-
պահակները՝ որոնցից կախ է ընկած խողովակը, բացուե-
ցան՝ ամբողջ խողովակաշարը ցած թողնելու համար: Բայց
ոչինչ չէ շարժում. խողովակն անշարժ մնացել է: Ոչ
մի լժակ չէ կարող նրան աւելի խորը մղել, ոչ մի լժակ
և ոչ մի վիլակ: Ամեն ինչ արդէն փորձել են: Եղթան,
վիշտայի գագաթից մինչև հորի մէջ, մինչև խողովակ-
ները, անշարժ կերպով լարուած-պրկուած է: Գլուխ-
նին կորցրած, անգործ, սպասողական դրութեան մէջ,
կարթերը ձեռներին, կանգնած են դորձաւորները տախ-
տակամածի վրայ, կծկուել են լաստանների և սանդուխը-
ների վրայ:

Հորի միջից լսում է գոռող-զորդուոց. խորութեան մէջ հսկան կատաղած մըցում է թզուկների դէմ, որոնք նորանոր խորամաճկութիւններ են հնարում անվերջ վեր-փար շարժուելու խաղը վերսկսելու համար։ Եթէ աւելի խորը չը գնայ, ապա պէտք է ամբողջ խողովակաշարը գուրս հանուի։ Եղթաները պէտք է ամրացնեն օղապա-հակներին և պէտք է խորութեան մէջ դորձող դկի հան-կերից աւարը ուժով լետ խեն։

Բայց վտանգաւոր է այդ պալքարը. հարիւրաւոր
պուդ ծանրութեամբ ահազին զանգուածով խողովակա-
շարը խորութեան միջից եթէ դուրս պրծնէ—ո՞վ զիտէ,
ուրիշ ի՞նչեր կարող է նա իրեն հետ պոկ տալ ու ցած
վլորել: Ո՞վ զիտէ, տախտակամածն ու գերանները, ինչ-
պէս մի խխունչի խեցի, չարդ ու փշուր չի անի, եթէ
ներքեւի հսկան գրոհ տայ բռնաւոր թղուկների վրայ:
Ո՞վ զիտէ, արգեօք կտրուելու չափ պիրկ լարուած շրդ-
թան կարծող է կրել այն բաղմապատիկ բեռը. արգեօք
նրա մասերն իրարից չեն պոկուի և արագութեամբ
դէս ու դէն շպրառելով՝ ամեն ինչ չարդուի, կամ ար-
գեօք նորից ցած չեն վլորի կիսով չափ բարձրացրած
բեռ՝ աղետալի աւելումն առաջնելով:

Գործաւորներից մէկը վազեց վարպետի ետևից: Վեր-
շինս իր ծխախոտն շտապով ծխեց վերջացրեց—աշխա-
տավայրերում ծխելը կարելի չէ, և ապա խկոյն եկաւ:
Վիշշալի մէջն է նա, մեքենավարի մօտ կանգնած
հրամայում է—«շողի»:

Արդեօք որեւէ բան շարժւմը է. շղթալի օղակ-
ները չեն ճարճաթում արդեօք։ Վիշվալի տախտակա-
մածի սիւները ճայթիւն են հանում—աղէտ գուշակող
ճարճատիւն ու ճայթիւն։ Արդեօք շողիի ահազին շար-
ժող ուժը յաղթող պիտի հանդիսանալ:

Յանկարծ ամենքը փախան. խորքերից ու վերեից ձիաժամանակ որոտացող նայթիւնից ու արաքոցից ահա-բեկուած՝ լայնարձակ դռներից դուրս փախան ամենքը:

«Ри́ш»:

«Фото»:

ՅԵՄՈՒ ի՞նչ պիտի լինի:

Մերենաների արանքից գոռածւմ է վարպետը՝ «ա-
ւելի շոսկի բան»:

ՄԵՔԵՆԱՆ ԽՈՐԾ հառաջու
է առեսումք: Ոչ մի շարժում:

Միւսնեղին հետևելով՝ Տիգրանն էլ էր փախաւ. տարօրինակ աղմուկը նրան էլ փախեցրեց: Նա լաւ չէր հասկանում, թէ ինչու ամենքն այդպէս լարուած ու շունչընին պահած դիտում են: Բայց նա ինքն էլ լարուած նայում է. հետաքրքրուած է թէ ինչ մի սարսափելի բան կարող է պատճել այնտեղ՝ ներսը: Մեքենալի մօտի գործաւորը տուաջուայ պէս իր տեղումը կանգնած է. վարպետն այնտեղ բարձրածալն խօսում է—չէ, Տիգրանը չի ուզում միւսների չափ հեռուն փախչի: Նա մնաց գուան մօտ կանգնած, ուզում էր տեսնի, թէ ինչ կը պատահի, եղբ ստօրերկրեալ հսկան ստիպուած լինի ետտայի իր աւարը:

Եւ շունչը բռնած ու զլուխս առաջ առկա, ու ողական դրութեան սարսափի և հաճուքի միջև, ըրթունքները բայց արած, ժպտում է Տիգրանը:

«Լի ու լի շողի», զուած լ է և
մերենավարը բաւականաչափ արագաշարժ չը թուաց
նրան, ինքն անձամբ թուաւ զործիքի դույլսը և թողեց
«լի ու լի շողի, բան»:

Մերենան աղմկեց

անհետանք, և յանկարձ մի ահաղին աղջուկ ու նար-

հատիւն, խորապես մն ու փշրտում, մի երկրաշարժ, և այդ
բոլորի միջից լսուեց մարդկալին մի նիչ, սիրտ կտրա-
տող, բայց և այնքան թուլ, մահամերժ մի աղաղակ, որն
անգիտուէն կուլ առւեց ժխորը այնպէս, ինչպէս որ բար-
ձրացած փոշու սկ ամսով լանկարծակի խաւարեցրեց ցե-
րեկուալ պայծառ լուսը:

Ամեն կողմից մի բազմաձայն աղաղակ բարձրացաւ.
ոչ մէկը չէր համարձակում ոտքը շարժել իր դրած տե-
ղից, որը թւում էր թէ տարութերւում է. ոչ մէկը միւ-
սին չէր տեսնում. յանկարծական խաւարի մէջ կանդնել
էին նրանք, ինչպէս անկենդան:

Եւ աւազու ու փոշեպատ, համարեա կուրացած
աչքերովի խլացած ականջներովի, կամաց-կամաց իրենք
իրենց դտան, կամաց-կամաց տեսան, որ մթութիւնը անց-
նում է, որ եղկիրը դեռ հաստատուն է, որ վիշկան դեռ
կանգուն է, որ իրենք դեռ ապրում են:

ի՞նչ պատահեղ ուրեմն:

Խողովակաշարը բարձրացել է. շղթան դիմացաւ.
Կտուրն է խորասակուել միայն. վիշկայի գաղաթի՝ իր կա-
րողութիւնից աւելի բեռնաւորուած անիւր, չարգել է
գերանները և ցած գլորել։ Ուրիշ ոչինչ միայն աւերուածն:
Թէ՞ ուրիշ մի բան էլ կայ։ Ուրիշ բան։ Ահա այնտեղ,
դոնից գուրս ցպրտուած փոշոտ ու ծիւթոս գերանի
տակ, մի չախչախուած, արիւնոտ զանգուած և այդ
զանգուածն ունի մի ամբողջ մարդկային գլուխ, որի
սպիտակ, զարհուրելի մահու հայեացըից նրան զրտ-
նող բանուորը սարսափած մի կողմն է թռչուս։ Դեռ
մի վայրկեան առաջ կանգնած էր նա այնտեղ, իրանը
դէսի առաջ թեքած, որպէս զի լաւ տեսնէ. ակնա-
պիշ՝ խնդում էր նա իր մանկական-ախուր ժպիտով.
իսկ այժմ...

Ա՞ւր է նա այժմ։
Ո՞վ, Տիգրանը։
Ալդ Տիգրանն էր ուրեմն...

զիու սմբակների դոփիւն, անիւների թաւալումն,
փոշու մի ամպ:

Կառքը կանդ առաւ:

Առաջին կառավարություն

Ա. հ. պարուս զամանելու մասին կառավարիչները սաստիկ յուղուածէն է: Այդ
Պարուս կառավարիչները սաստիկ յուղուածէն է: Նա նոյն
սի մի խառնդարձունքը աշխատավայրերունքը: Նա նոյն
իր կարծիր-կաշէ ձեռնոցներից ձէկը հանեց և այդ
որի վրայ փալում էր մեծ աղամանդեալ մա-
քով, որի վրայ փալում էր մեծ աղամանդեալ մա-
նին, ցոյց տուեց վիշԿայի կատարը: «Ամեն ինչ քան-
ւած: Ալգակէ՞ս, ալգակէ՞ս: Տելեֆոնով լայտնեցէք իս-
կն, վարպետ, վերանորոգութիւնը անմիջապէս պէտք է
էք: Ինչ էք ասո՞ւմ: Աղէ՞տ: Ա՞հ, այնտեղ, ալո՞: Ար-
և մեռածէն է: Ափսոս... Ալրեմն, կարգադրեցէք անհրա-
շտ եղածք և, ամեն բանից առաջ, հեռախօսեցէք իս-
կն, անմիջապէս»:

Պարոն կառավարիչը քաղաքավարի կերպով ցած
առաւ զլխարկը՝ նայելով գեպի քարուքանդ եղած, ա-
րրւնաշաղախ կողմը. նա նստեց կառքը: Ապա ձիու սրմ-
բակների դոփիւն, անիւների թաւալում, փոշու մի տմալ
—պարոն կառավարիչը դնաց: Կարիք չը կար, որ մի ալդ-
պիսի հանդամանք կլուրի թղթախաղը երկար ժամանա-
կով ընդհատելու պատճառ դառնար:

Վարպետի տանը, սենեակում, մի հիւր կայ, մի արտասովոր հիւր։ Նա նստել է ծածկուած, փաթաթուած, նորա զլուխն անդամ փաթեթների մէջ խորասուզուած է։ Զեռքերն անշարժ ընկած են դոզբ։ Բարեսում են—

նա իւր աչքերը վեր չէ բարձրացնում, խօսեցնում են—չէ պատասխանում։ Նորա հետ խօսում են, իսկ նա կարծես չէ լսում, կերակուր են հրամցնում, բայց նա չէ ուտում։

Անդինն է եկել, որ իւր որդուն թաղէ։ Բայց Տիգրանը արդէն պառկել էր անզարդ, անապատ աւազագաշում, ուր կանգնած են մի քանի ողորմելի խաչեր ու քարեր։

Անդինը նստել է այստեղ, որպէս ինքը՝ անխօս թախծութիւնը, որի առջևից ամբողջ զարդարուն աշխարհը թաւալզոր անցնում է՝ առանց իրեն կպչելու։ Նորա շուրջը խօսում են մարդիկ—թող որ խօսեն, իւր որդին այլես երբէք խօսելու չէ։ Նորա շուրջը մարդիկ ուտում ու խմում են—թող որ ուտեն ու խմեն, իւր որդին այլես երբէք ուտելիք կամ ըմպելիք վայելելու չէ։ Դիշեր եղաւ և ամենը պառկեցին տախտերի վրայ քնելու—թող քնեն, Տիգրանն էլ է քնել ու յաւիտեանս չէ զարթնելու այլես։ Նրանք պատմեցին նոյնպէս, թէ ինչպէս էր պատահել աղէտը, թէ ինչպէս վերշին «լի ու լի շողի» հրամանի վրայ լսուեց ճայթիւնը, որ դուրս փախցրեց բոլոր գործաւորներին, թէ Տիգրանը որքան մօտիկ էր կանգնել դուան, երբ զերանները խորտակուեցին և թէ ինչպէս դերանը սպանեց նրան, որպէս տապարը ցած է զլորում նորատառնկ ժառը։

Կոլողուած ու անշարժ, աչքերը խոնարհած, նստել է մալրը։ Լսում է նա արդեօք, չէ լսում։ Վարպետն ասում է։ «Նա մի պարկեշտ տղայ էր, որը քսան ըուբին շուտով կը վաստակէր։ Իսկ յաջորդ տարին՝ երեսունը»։

Անդինը լսում է և չէ լսում։ Քսան ըուբին, երեսունը ըուբին... թող նրանք ըուբլինների մասին խօսեն.

իւր որդին այլես երբէք կոպէկի կարիք չէ ունենալու։ Նրա երխասարդութիւնն անցած, նրա թեր չարդուած, նրա սիրան այլես չէ բարախում, որանք ի՞նչ քսաննրեսունը ըուբլու մասին են խօսում։

Նատ բան են ասում նրանք. նոյնպէս ապահովագրութեան մասին են խօսում. այս վտանգաւոր գործի գրութեան մասին էն խօսում. այս վտանգաւոր գործի մէջ իւրաքանչիւր բանուորը ապահովագրուած է։ Եթէ մէջ իւրաքանչիւր բանուորը ապահովագրուած է։ Եթէ մասինի, եթէ սպանուի, փող են փիարում. գործանա վնասուի, բայց սպանուի, փող է տալիս թափուած արեան փոխարէն։ Արտէրը փող է տալիս թափուած արեան փոխարէն։ Անդինը է այդ վճարը։ Գործատիրոջն էր ծախուած անազինն է այդ վճարը։ Գործատիրոջն էր ծախուած արտիւնը, երբ սա դեռ արագ հասում էր բարախող սրտի ըիւնը, երբ սա դեռ արագ հասում արտիւնը, մէջ։ Արդ, երբ յանկարծակի կանդ է առնում արտիւնը, մէջ։ Անդինը լսում է և չէ լսում։ Արեան փոխարէն՝ փող. այդ ի՞նչ բան է։ Փողն ի՞նչ օգուտ է մեռածին. փող. այդ ի՞նչ բան է։ Փողն ի՞նչ օգուտ է մեռածին։ Նորան թւում էր փողն իւր որդուն կը կենդանացնէ։ Նորան թւում էր թէ բաղաքի մարդիկ բացարձակ անմտութիւններ են թուրս տալիս։ Ի՞նչ առնչութիւն կայ մի սպանուած մարդու և զրածի մի որոշ գումարի միջեւ։

Եւ Անդինը աւելի խորն է թաղւում իր ծածկոյն մէջ, աւելի ես քաշ է ծգում զլուկը։ Ուզում է ների կենալ ու դնալ տուն, բայց նորա մարմինը վշտաբեկ է եղել. երեք օր է արդէն Բալախսանում, վարպետի տանը, վեր է ընկած ինչպէս մի մունչ հիւր։ Ո՞վ պիտի օդնէ իրեն տուն երթալու։

Այդ ժամանակամիջոցում վարպետը շահազրդուած էր Անդինի վիճակով, ինչպէս որ վայել է մի արժանաւոր ու իր պարտականութիւնն ըմբռնող պաշտօնեալի։ Երրորդ օրը կէսօրից յետոյ ուղղակի այդ լուռ սգուորին գառնալով՝ խօսում և իրեն հետ վերցնում է ու տանում։

Գրասենեակը պիտի գնան. այնտեղ նորան պիտի յանձնուի ապահովադրական վճարը: Եւ մայրը. հանդիսաւոր կերպով, խոժոռադէմ, իւր սղոյ շօրերի մէջ ծածկուած, վեր է կենում փարպետի հրամանը կատարելու, առանց իւր պլսի դալիքին վերահասու լինելու:

*

Վարպետի տղան՝ Մոսկուայի ուսանողը, որ մի քանի ժամով բացակայ էր տնից և որի սիրար մղկտում էր այդ մունչ հիւրին նայելով, այն մատաղ սիրար, որ գեռ նաւթի մէջ չէր խեղդուած, աղտոտ ոսկիների ժանր շերտի տակ չէր ննշուած—վարպետի տղան, մտաւ ծնողների սենեակը, որտեղից բարձրածայն խօսակցութիւն էր լուսում: Ահա մէկը վաղեց նրա զիմաց, բոնեց թեն ու ասաց. «տես, տես, իվան, այս մկրատը»: Եւ մի գեղեցիկ արձաթափայլ մկրատ շոշողաց ուսանողի աչքի առաջ մի մոխրագոյն կանացի ծեռքի մէջ: «Սա ի՞նչ է. ի՞նչ է նշտանակում այդ, ասաց ուսանողը և նայեց մօրը. չեմ հասկանում»...

«Մկրատը, իմ մկրատը. և այստեղ տսեղներ, տեսկարելու համար են: Թելերը. թաշկինակներս. եկ, եկ ու տես—մի տարող սեղան լիքը: Այդ տաճենը ես գնեցի. ամենը. հէնց հիմայ, հանապարհին, փողոցում, խանութում: Ամենն իմս է. նոյնպէս այս կտաւը»...

Ուսանողը մնաց շուարտծ. յուղուած՝ նայեց նա շատախօսող պառաւի վրայ, որի սե աչքերը երեխայական ուրախութիւն և պառաւական ընչասիրութիւն էին արտացոլում: Նորա ոտքերն ուրախութիւնից գետին չին կպչում:

Կարելի՞ բան է այդ. մի՞թէ Անդինն է սա: Սղոյ շօրերի մէջ խստագէմ, կոպիտ զեղեցկութեամբ կերպարանքը—և այժմ, այդ գնած բաները—ասեղ, մկրատ, թաշկինակներ...

«Մայրիկ, մրմռաց ուսանողը ու ծեռքը ճակտին՝ սարսափած ետ քաշուեց. ի՞նչ է պատահել այս կնոշ»:

Մայրը մօտեցաւ որդուն. նա էլ սարսափած է, զայրացած: «Երեակալիք, իվան, խաչքարի համար չէ ուզում որ եօթ բուրլի տայ: Այս կինը յանկարծ փոխուեց»:

«Մայրիկ, նա յնորուել է... Անիժուած վայր»...

«Ցնորուել, նա, ախ չէ, նա շատ խելօք է: Հինգ հարիւր բուրլի ստացաւ ու էլի քսանը: Հէնց որ փողը տեսաւ, ուրիշ մարդ գտրծաւ: Այժմ ուզում է ամբողջ աշխարհը գնել: Խօ լսեցիր. խաչքարի համար եօթ բուրլի անդամ. չէ ուզում տալ. անպիտան պառաւը»...

*

Տիգրանի գերեղմանի վրայ խաղում է արծակ աւազը:

Անդինը վաղուց վերագրածել է իրենց գիւղը. հինգ հարիւր բուրլին վաղուց ծախուել է: Եղ, ոչխար, կով է գնել Անդինը. Աղայիշէնում նա մի հարուստ կին է: Եւ նորա այդ բաղդաւորութիւնը թունաւորեց ուրիշ մայրերի սիրար: «Գնա՛, Պետրոս, որդիս, գնա թալախանի, գնա՛, Ռաֆայէլն էլ գնաց, Ստեփանն էլ գնաց»...

Տիգրանի փոխարէն նրա կարթը վաղուց մի ուրիշ լեռնցի տղայ է բոնել, նրա պէս ուժեղ, նրա պէս սեացած ու աղտոտուած, նրա պէս անփործ և նրա պէս հայրենիքի կարօտը սրտումը:

Իսկ Տիգրանի մասին այլ ես ոչ ոք չէ խօսում:

Բայց երբ երեկոյանում է, այն ժամանակ խուցերի շուրջը հնչում է երկարածիկ, թախծալի եղանակով երգն անսասան վստահութեան, առանց որի մարդս անկարող է ապրել—հաւատարմութեան երգը, Տիգրանի երգը—

Ախ, այն ժամանակ իմ անձնանուէր

Մայրը քար կ'ուտէ, քացախ կը խմէ...

ՀՀ Ազգային գրադարան



NL0171768

Գիմն է 20 պղ.